ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 114

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԵՐԻ 12-Ի ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի 2024 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը.
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին.
2) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
3) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 11-ի N 127-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին.
5) Հողամասի վարձակալության պայմանագիրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 06-ի N 3/1 և Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի 2015 թվականի ապրիլի 09-ի N 29 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:.
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 157-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Կտայքի մարզի Մեղրաձոր համայնքի

ավագանու 2019 թվականի հուլիսի 16-ի N39 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.
9) Բնակելի համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N 130 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
11) Շվեցարիայի Հանրապետության Ժնև քաղաքի Տղուանե համայնքի կողմից հրավերի ընդունման մասին:

2. Սույն նախագծի 1-ին մասի 4 կետը՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը հանել՝ Արդարադատության նախարարության կողմից փորձաքննության եզրակացության ուշացման պատճառով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 115

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի
ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի
թիվ 115 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքն ընդգրկում է Ծաղկաձոր, Աղավնաձոր, Մեղրաձոր՝ կազմում Գոռգոչ, Արտավազ՝ կազմում Փյունիկ, Հանքավան բնակավայրերը: Սույն կանոնադրությունը գործում է Ծաղկաձոր խոշորացված համայնքի բոլոր 6 բնակավայրերի համար:

1.2. Սույն քաղաքաշինական կանոնադրությունը հիմք է հանդիսանում հետագայում գոտևորման նախագծի մշակման համար և կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի ,Լրացուցիչ պայմաններե բաժնում:

1.4. Համայնքի քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է Ծաղկաձոր խոշորացված համայնքի ,Կոտայք - 5ե միկրոռեդգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի, սույն կանոնադրության, ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության, գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի տարածքում գտնվում են հիմնականում վերջին 200-300 տարվա ընթացքում կառուցված շենքեր և շինություններ, որոնց մեջ աչքի ընկնող կառույցներում գերիշխող են ավանդական քարի ճարտարապետական հին ոճը՝ քարե մակերեսների և մանրամասների որակյալ և բարձրարվեստ մշակմամբ հաճախ նորոգման կարիք ունեցող, ինչպես նաև հիմնականում վերջին 30 տարիներին կառուցված նորաոճ շենքերը՝ մասնավորապես, մեծամասամբ հյուրանոցային և հանգստի նշանակություն ունեցող շինություններ, ամառանոցներ, իսկ վերջին տարիներին նաև ապարտ-հոթելներ՝

ժամանակակից բարձրորակ շինարարական նյութերի կիրառմամբ և տեխնիկական հագեցվածությամբ, հաճախ համադրելով Ծաղկաձորի ավանդական առանձնահատկությունների հետ:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածքում տեղակայված հուշարձանների ցուցակն, ըստ բնակավայրերի, բերված է ներքո աղյուսակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՔԱՂԱՔ ԾԱՂԿԱՁՈՐ

1	2	3	4	5	6	7	8
1			ԹԱՆԳԱՐԱՆ ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ		քաղաքի կենտրոնում	Հ	4: ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (4.1)
2			ԽԱՉՔԱՐ	11 դ.	քաղաքի մեջ, Մ. Մաշտոցի անվան ճամբարի մոտ	Հ	5
3			ԽԱՉՔԱՐ	11 դ.	քաղաքի մեջ, «Նարեկ» հանգստյան տան մոտ	Հ	6
4			ԽԱՉՔԱՐ	12 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում	Հ	7
5			ԽԱՉՔԱՐ	12 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում	Հ	8
6			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	քաղաքի ամ եզրին, «Եղևնիների բացատ»-ում	Հ	9
7			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	ՀՀ Գրողների միության հանգստյան տան տարածքում	Հ	10
8			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	քաղաքի մեջ, Մ. Մաշտոցի անվան ճամբարի մոտ	Հ	11

9			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	«Արցախ» հանգստյան տան մոտ	Հ	12	
10			ԽԱՉՔԱՐ	13 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում	Հ	14	
11			ԽԱՉՔԱՐ ԱՊՈՒՏԱՀԼԻ	1255 թ.	«Մոր և մանկան» հանգստյան տան բակում	Հ	13	

ԳՅՈՒՂ ԱՂԱՎՆԱՁՈՐ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 8-6 դդ., վաղ միջնադար	գյուղից 1.5 կմ հվ-աե, «Չընգլի քարեր» վայրում	Հ	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.		Հ	1.1
2			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-17 դդ.	Սբ. Հովհաննես եկեղեցու շուրջը	Տ	7.4: Ենթակայությամբ ներկայացված է 8 հուշարձան (7.4.1-7.4.8)
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	միջնադար- 20 դ.	գյուղի աե մասում, ՊՇԷԿ-ի հանգստյան տան տարածքում	Տ	2: Ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (2.1)
4			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 4-3 հազ.	գյուղից 5 կմ հվ, «Զոմմե» վայրում	Հ	4
5			ԵԿԵՂԵՑԻ	միջնադար	գյուղից 1 կմ հվ-ամ, ցեմենտի գործարանի հանգստյան տան տարածքում	Տ	5
	5.1		Գերեզմանոց	միջնադար		Տ	5.1
6			ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	17 դ.	գյուղի հվ-աե եզրին	Հ	6

	6.1		Գերեզմանոց	11-20 դդ.	եկեղեցու շուրջը	Հ	6.1: Ենթակայությամբ ներկայացված է 31 հուշարձան (6.1.1-6.1.31)
		6.1.1	Մատուռ	19 դ.		Տ	6.1.32
7			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հվ մասում, ճանապարհի աջ կողմում, նորաշեն սրբատեղիում	Հ	8
8			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղից 800 մ ամ, սարի գագաթին, «Ճգնավոր» սրբատեղիում	Հ	9
9			ՄԱՏՈՒՌ «ՆԱՐԵԿ»	17 դ.	գյուղի աե մասում	Տ	10: Ենթակայությամբ ներկայացված է 4 հուշարձան (10.1-10.4)
10			ՋՐԱՂԱՑ	19 դ.	գյուղի հվ մասում	Տ	11

ԳՅՈՒՂ ԱՐՏԱՎԱՁ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 3-1 հազ.	գյուղից 0.5 կմ հս-ամ, Արտավազ-Հանքավան ճանապարհի աջ կող-մում, բլրի գագաթին	Հ	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 3-1 հազ.	գյուղից 0.3 կմ հս-ամ	Հ	1.1
2			ԲԱՑՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	գյուղի հս մասում, «Թաքյառլու» վայրում, գետի աջ ափին	Հ	2
3			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1.5 կմ հս-ամ, Հանքավան տանող ճանապարհի աջ կող-մում, ջրամբարից 0.5 կմ ամ	Հ	3
4			ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԱՐՏԱՎԱՁԱՎԱՆՔ (ԱՐՏԱՎԱՁԴԱՎԱՆՔ, ԱՐՏԱՎԱՁԴԱ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ)	6-7 դդ.	գյուղից 0.5 կմ աե	Հ	4
	4.1		Գերեզմանոց	6-13 դդ.	եկեղեցու շուրջը	Հ	4.3: Ենթակայու-թյամբ ներկայաց-ված է 12 հուշար-ձան (4.3.1-4.3.12)
	4.2		Եկեղեցի	7 դ., վրկռ. 11-14 դդ.		Հ	4.1
	4.3		Եկեղեցի	6 դ.			4.2

ԳՅՈՒՂ ՓՅՈՒՆԻԿ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ., միջնադար	գյուղից 0.5 կմ հս-աե	Հ	1

ԳՅՈՒՂ ՀԱՆՔԱՎԱՆ

1	2	3	4	5	6	7	8
1			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-20 դդ.	գյուղ մտնող ճանապարհի ձախ կողմում	Տ	1: Ենթակայությամբ ներկայացված է 2 հուշարձան (1.1-1.2)
2			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	Հանքավան-Վանաձոր ճանապարհից աջ	Հ	2
3			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 1 հազ.	գյուղ մտնող ճանապարհից աջ		3

ԳՅՈՒՂ ՄԱՐՄԱՐԻԿ

1	2	3	4	5	6	7	8
1			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ»	միջնադար	գյուղից 5 կմ ամ	Հ	1
	1.1		եկեղեցի	միջնադար		Հ	1
	1.2		Գերեզմանոց	միջնադար		Տ	
2			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղի ամ մասում, Մարմարիկ-Մեղրաձոր ճանապարհից ձախ, երկաթգծի մոտ	Հ	2
3			ԵԿԵՂԵՑԻ	15 դ.	գյուղի մեջ	Տ	3
4			ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ	9-10 դդ.	գյուղի մեջ, Ֆ. Սեփոյանի տնամերձ հողամասում	Հ	4
	4.1		Գերեզմանոց	10-19 դդ.		Տ	4.1
5			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1968 թ.	գյուղի մեջ	Տ	5

ԳՅՈՒՂ ՄԵՂՐԱՁՈՐ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հվ-ասե	Հ	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցից 0.5 կմ հվ-ամ, «Գոգոլի քարեր» վայրում	Հ	1.1
2			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2 հազ. միջնադար	գյուղից 1 կմ հս, «Բերդի գլուխ» բարձունքի վրա	Հ	2
	2.1		Գերեզմանոց	միջնադար			2.3
	2.2		Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.		Հ	2.1
	2.3		Եկեղեցի	միջնադար	ամրոցի տարածքում	Հ	2.2
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	7-19 դդ.	գյուղամիջյան 1881 թ. եկեղեցուց 90 մ ասե	Հ	7.5: Ենթակայությամբ ներկայացված է 13 հուշարձան (7.5.1-7.5.13)
4			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 4 կմ հս-ասե, «Գուլանլու գոմեր» վայրում	Հ	4
	4.1		Գերեզմանոց	միջնադար		Տ	4.1: Ենթակայությամբ ներկայացված է 7 հուշարձան (4.1.2-4.1.8)

	4.2	Մատուռ Կարմիր խաչ	միջնադար		Հ	41.1
5		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղի 1.5 կմ հս-աե, «Ռնդամալի» («Մեհրամ դարասի») վայրում	Տ	5
	5.1	Գերեզմանոց	միջնադար		Տ	5.2: Ենթակայությամբ ներկայացված է ևս 2 հուշարձան (5.3-5.4)
	5.2	Մատուռ	12-13 դդ.	«Ռնդամալի» վայրում	Տ	5.1
6		ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ	Ք.ա. 14-9 դդ.	գյուղի տարածքում	Հ	6
7		ԵԿԵՂԵՑԻ	միջնադար	գյուղից 10 կմ հս, «Ղարոյի գոմեր» վայրում	Տ	8
	7.1	Գերեզմանոց	միջնադար		Տ	8.1
8		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՁՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1985 թ.	գյուղի մեջ	Հ	9
9		ՄԱՏՈՒՌ «ՁՈՐԻ ԺԱՄ»	9-13 դդ.	գյուղից 3 կմ հս-աե	Հ	10: Ենթակայությամբ ներկայացված է ևս 2 հուշարձան (10.1-10.2)
	9.1	Գերեզմանոց	միջնադար		Հ	10.3: Ենթակայությամբ ներկայացված է 2 հուշարձան (10.3.1-10.3.2)

10			ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԹԵԺԱՌՈՒՅՔ	12-13 դդ.	գյուղից հվ, անտառապատ բարձունքին	Հ	11
	10.1		Գավիթ - նախամուտք	12-13 դդ.	կից է եկեղեցուն ամ-ից	Հ	11.2
	10.2		Եկեղեցի	1196-1199 թթ.		Հ	11.1: Ենթակայությամբ ներկայացված է 1 հուշարձան (11.1.1)
	10.3		Մատուռ	12-13 դդ.	եկեղեցուց 10 մ հվ	Հ	11.4
	10.4		Մատուռ - նախամուտք	12-13 դդ.	կից է եկեղեցուն հվ-ից	Հ	11.3

ԳՅՈՒՂ ԳՈՌԳՈՉ

1	2	3	4	5	6	7	8
1			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս-ամ, Փյունիկ գյուղ տանող ճանապարհից աջ	Հ	1

Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանք իրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Պահպաման ենթակա են 3.1 կետում նշվածները, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող

համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ շենքերը և շինությունները.

1. Խմելու ջրի օրական կարգավորման ջրամբարները, ջրամատակարարման ցանցը,
2. Կոյուղաջրերի մաքրման կայանները՝ կոյուղու կոլեկտորների հետ միասին, ջրահեռացման ցանցը՝ դիտահորերի հետ միասին,
3. Համայնքի տարածքով անցնող ոռոգման հիմնական ջրանցքները, ոռոգման առուների ցանցը,
4. Էլեկտրահաղորդման ցանցի օբյեկտները՝ ենթակայաններ, հենասյուներ, հաղորդագծեր ևն,
5. Գազամատակարարման ցանցի օբյեկտները՝ բաշխիչ կայաններ, խողովակաշարեր ևն,
6. Հեռահաղորդակցման և կապի ցանցի օբյեկտները՝ վերգետնյա և ստորգետնյա մալուխներ, բջջային կապի կայաններ, աշտարակներ ևն,
7. Երկաթուղագծերը՝ անվտանգության գոտիով և տարահատման կամրջով,
8. Մայրուղիների և ճանապարհների հետիոտնային անցումները՝ ստորգետնյա և կամրջային:
9. Հանրային այգիները,
10. Մարզադպրոցները,
12. Համայնքի փողոցների ցանցը՝ ճանապարհային նշանների և սարքավորումների հետ միասին,
13. Գերեզմանոցները՝ սանիտարարապաշտպանիչ գոտու հետ միասին,
14. ՀՀ ՊՆ, ՆԳ, ԱԻՆ օյեկտները, պաշտպանական, քաղաքացիական պաշտպանության կառույցները, ապաստարարանները, ազդանշանման համակարգերը ևն,
15. Դպրոցներ
16. Համայնքային նշանակության շենք շինություններ/գրադարան, արվեստի դպրոց,մանկապարտեզ և այլն

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Համայնքի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական, այնպես էլ արդի ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը՝ պայմանով, որ կատարվեն ճաշակով, մասնագիտական բարձր վարպետությամբ և համապատասխան քաղաքաշինական և ճարտարապետական բոլոր նորմորին և համայնքապետարանի կողմից տրված առաջադրանքին:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդա-քանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրին հարազատ մնալու, չխաթարելու, այլ ընդհակառակը, բարելավելու, զարգացնելու անհրաժեշտությունը:

բ. հատուկ ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի գեղարվեստական ձևավորմանը, բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (,հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն իրականացնել, հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը,

դ. խրախուսվում են շենքի ճակատների և փողոցի հարակից մասերի մաքրությունը, ամրությունը, արտաքին լուսավորությունը:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները). խրախուսվում են բարձրորակ, հարատև, էկոլոգիապես մաքուր ու անվնաս շին. նյութերը:

բ. համայնքը սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառները ծածկոցով,նստարաններով և լուսավորության ցանցով հագեցնել և ձևավորել գեղարվեստական ճաշակով բարձրորակ շին. նյութերով,

գ. հասարակական նշանակության շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

դ. հասարակական, ինչպես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր) հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ,

բ. հետևողականորեն իրականացնել,ամբողջ համայնքի հատվածում, հանքերի փոշու և քամու դեմ պաշտպանական գոտու, ինչպես նաև գերեզմանոցների շուրջ սանիտարական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ):

4. Ծաղկաձոր համայնքի ամբողջ տարածքում մինչև շինարարական աշխատանքների սկսելը շինարարական հրապարակի նախապատրաստման ինչպես նաև հողային աշխատանքների համակարգվածության համար ստեղծել շրջիկ հանձնաժողով վերոնշյալ աշխատանքների կատարումը վերահսկելու ինչպես նաև նորմատիվ և իրավական ակտերով սահմանված գործունեություն իրականացնելու համար:

5.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծաղկաձոր համայնքը հանդիսանում է զբոսաշրջային կենտրոն և այն որ համայնքի ողջ տարածքում զբոսաշրջիկների, ինչպես նաև հյուրերի մեծ հոսքը նկատվում է հիմնականում հանգստյան օրերին /շաբաթ և կիրակի/ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված տոն օրերին, Ծաղկաձոր համայնքի ողջ տարածքում անհրաժեշտության դեպքում՝ դադարեցնել ցանկացած տեսակի շինարարական աշխատանքների իրականացումը:

VI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Քաղաքաշինական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար պարտադիր են քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, որը ապահովում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշեր, ինչպես նաև նախագծման իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի հաստատումից հետո, համայնքի ղեկավարի կողմից: Շինարարության թույլտվություն չի պահանջվում շենքերի, շինությունների, ընթացիկ վերանորոգման, շենքերի հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը կամ չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

Քանդման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

Քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

Ավարտված շինարարության փաստագրումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրում է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Օբյեկտների կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության օրենքով՝ սահմանված կարգով նախագծերի ձեռքբերման, փորձաքննության անցկացման, շինարարության թույլտվության ստացումով:

Արգելվում է առանց համայնքի ղեկավարի որոշման և թույլտվության շենքերի պատշգամբների, ինչպես նաև վարձակալած ոչ բնակելի տարածքներում որևէ վերափոխումներ կատարելը,շենքի արտաքին տեսքը փոփոխելը:

Արգելվում է շենքերի բակերում որևէ տաղավար կամ ավտոտնակ տեղադրելիս կամ կառուցելիս ցանկապատումները, ծանր տրանսպորտային միջոցների կանգառումը:

Արգելվում է գազոններին կամ մայթերին կից հողատարածքները բանջարանոցի վերածելը, նախամուտքերը և սանդուղքավանդակները տնտեսական իրերով ծանրաբեռնելը, չնախատեսված տեղերում ընտանի կենդանիներ պահելը:

Շինարարական տեխնիկաների շարժը՝ մասնավորապես տեխնիկայի կշիռը և դրա անցնող ճանապարհի հետագիծը համայնքի ողջ տարածքում համապատասխանեցնել համայնքի ղեկավարի հետ:

2. ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Բոլոր տեսակի արտաքին գովազդային նյութերի, ցուցափեղկերի, հայտարարությունների, ցուցատախտակների և այլ տեղեկատվական միջոցների տեղադրումը շենքերի, պարիսպների առանձին

վահանակների, ստենդների և նման ճարտարապետական կառույցների վրա թույլատրվում է միայն համայնքի ղեկավարի որոշմամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Գովազդները պետք է լինեն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հավաստի, օրինական, պատշաճ պահպանելով արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվության բոլոր պայմանները:

Գովազդի տեղաբաշխման նկատմամբ հսկողությունը իրականացնում է համայնքապետարանը: Արգելվում է անբարեխիղճ, ոչ ՀՀ օրենքներին համապատասխանող գովազդի տեղադրումը:

Ժամանակավոր տաղավարների տեղադրումը թույլատրվում է ըստ կառավարության կողմից սահմանված կարգի, համայնքի ղեկավարի որոշմամբ, հող.օգտագործման և շինարարության բաժնի մասնագետի ներկայությամբ՝ համաձայն առևտրի և սպասարկման համայնքային կանոնների:

Վերը նշված գործողությունների համար գանձվում են համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարներ:

Համայնքի ղեկավարը սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը: Համայնքի ավագանու որոշմամբ անվանվում և վերանվանվում են համայնքային նշանակության փողոցները, հրապարակները, զբոսայգիները և այլն:

Արգելվում է ինքնուրույն կերպով հանել, տեղադրել և վերատեղադրել փողոցների անվանումների և համարակալման ցուցանակները:

VII. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության հիման վրա առանց էական շեղումների:

Ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանները:

Շինարարական աշխատանքներ կատարելիս շինհրապարակները պետք է ցանկապատվեն՝ ժամանակավորապես և տեսանելի տեղում փակցվեն համապատասխան ցուցանակներ ունենան համապատասխան կահավորում: Շինարարական աղբն ու հողը պետք է դուրս բերվեն կուտակվելու ընթացքում: Շինարարական կամ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ձեռնարկում է միջոցառումներ, որպեսզի չկեղտոտվեն շինհրապարակին հարող տարածքները, չաղտոտվի օդը:

Հողային աշխատանքների կատարումը (հրապարակներում, մայթերում, անցումներում, բակերում, սիզամարգերում, այգիներում, պուրակներում և այլ տեղերում) ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման և վերանորոգման ժամանակ, կապված վերգետնյա կառույցների հետ, թույլատրվում է միայն ըստ համաձայնեցված նախագծերի և համայնքի ղեկավարի թույլտվության հիման վրա:

Ճանապարհածածկույթի կամ հողածածկի քանդման հետ կապված վթարային աշխատանքները թույլատրվում են ընդունված վթարային հեռախոսագրի առկայությամբ այն կազմակերպությունների կողմից, որոնք տնօրինում են հաշվեկշռում գտնվող ինժեներական ցանցերը:

Ստորգետնյա ինժեներական ցանցերի վթարների վերացումը սկսվում է անմիջապես հեռախոսագրի հաղորդումից հետո, այդ մասին տեղյակ պահելով ավտովերահսկողությանը և կոմունալ սպասարկման ձեռնարկությանը:

Վթարային աշխատանքների տեղը պետք է շրջափակվի, կահավորվի ճանապարհային նշաններով և լուսավորվի մութն ընկնելիս: Վթարը վերացնող կազմակերպությունը պարտավոր է նաև անհապաղ (նախնական) վերականգնի քանդված հատվածը հողով՝ շերտային խտացումով և համապատասխան չափի խճանյութով, ինչպես նաև մաքրի ավելորդ հողից և շինարարական մնացորդներից, գոյացած աղբից:

Վթարից վերականգնված հատվածները հանձնվում են կոմունալ սպասարկման ձեռնարկությանը կամ ճանապարհային հսկողություն իրականացնող ծառայությունների ներկայացուցիչներին ակտով, ճանապարհի ծածկույթը ամբողջովին վերականգնելուց հետո:

Կտրականապես արգելվում է ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման կամ պլանային վերանորոգման աշխատանքների կատարումը վթարային աշխատանքների պատրվակով:

Արգելվում է ինքնակամ պեղումների, հորատման, սյուների ու ծողերի տեղադրման, հողածածկույթի մշակման, հրապարակների հողահավասարեցման, փլատակների և քանդման ենթակա

կառույցների տակի հողածածկույթների մշակումը առանց ստորգետնյա ինժեներական ցանցերի (էլեկտրականություն, գազ, ջուր և այլն) անջատման:

Մագիստրալային փողոցների հատման հիմնական մեթոդը հանդիսանում է, որպես կանոն, փակ՝ ստորգետնյա ձևը, որը լուծվում է նախագծային կազմակերպությունների կողմից, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում և համաձայնեցվում ընդունված կարգով:

Արգելվում է որևէ տեսակի հողային և քանդման աշխատանքների կատարումը նոր ճանապարհածածկույթի (ասֆալտի) կատարումից հետո փողոցներում, հրապարակներում:

Բացառություններ թույլատրվում են միայն վթարների, ֆորսմաժորային իրավիճակներում և համապատասխան թույլտվության առկայության դեպքում:

Շինարարական, վերանորոգման աշխատանքների ժամանակ ցանկապատման, երթևեկության կարգավորման, ճանապարհային նշաններով կահավորման և գիշերային լուսավորման պատասխանատվությունը կրում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտը: Շինարարական կազմակերպությունը պարտավոր է մագիստրալային և հասարակական տրանսպորտի երթևեկության, փողոցների շարժման ուղղությունների փոփոխության մասին պետավտոտեսչության միջոցով ապահովել բնակիչների անվտանգությունը: Աշխատանքների ավարտից հետո ժամանակավոր կարգավորման նշանները վերացվել են:

Փողոցների երթևեկելի մասի մասնակի վերանորոգումների ժամանակ պետք է ապահովվի տրանսպորտի անխափան երթևեկությունը, իսկ միջանցիկ անցման փակելիս ապահովվի հրդեհային պաշտպանության, շտապ օգնության, հատուկ սանիտարական մաքրման, էլեկտրական և գազի

ծառայության մեքենաների երթևեկության պայմանները: Անցումների փակման վերաբերյալ տեղյակ է պահվում շտապ օգնության, հակահրդեհային ծառայություններին և պետավտոտեսչությանը:

Ժամանակավոր շրջանցումային ճանապարհները, հետիոտնային արահետները, կամուրջները, բակերի և շենքերի մուտքերի մերձեցման ուղիների վերանորոգման աշխատանքները ավարտելիս վերացվում են կառուցապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպությունների կողմից:

Ճանապարհների լրիվ փակման և երթևեկության դադարեցման որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ համաձայնեցնելով պետավտոտեսչության հետ:

Երթևեկելի մասի և մայթերի շինարարության վերանորոգման աշխատանքների ժամանակ ստորգետնյա ցանցերի տնօրինողները պարտավոր են իրենց ուժերով, վերանորոգում կատարողների պահանջով, կատարել վերատեղադրող ցանցերի անջատումը: Բարեկարգման նպատակով ստորգետնյա ինժեներական ցանցերի նոր նշումների վերատեղադրումը կատարում են ցանցերը տնօրինողների կողմից, շինարարության կամ վերանորոգումը իրականացնող պատվիրատուի կազմակերպության պատվերով ու նրա միջոցներով: Նախագծից էական շեղումներ ունեցող ինժեներական ցանցերի տնօրինողները վերատեղադրման աշխատնքները կատարում են իրենք, սեփական միջոցներով:

Քաղաքացիների կողմից ինժեներական կառուցումների միացումը, որպես կանոն իրականացվում է բարեկարգման աշխատանքների ժամանակ:

Թրթուրավոր տրակտորների և այլ մեքենաների շարժումը վերանորոգված փողոցներով արգելվում է: Նման տրանսպորտի տեղափոխությունը համայնքի տարածքում կազմակերպվում է միջդաշտային ճանապարհներով և երկրորդային նշանակության փողոցներով:

Փողոցները, մայթերը, ասֆալտապատված և բարեկարգված այլ տարածությունները ինքնակամ քանդողները անհապաղ դադարեցնում են քանդման աշխատանքները, իրենց միջոցներով վերականգնում քանդված տարածքի նախկին տեսքը և օրենքով սահմանված կարգով կրում պատասխանատվություն:

VIII. ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ստորգետնյա ինժեներական ցանցերի հետ առնչվող բոլոր տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքները թույլատրվում են միայն այն նախագծով և սխեմաներով (տեխնիկական պայման), որոնք համաձայնեցված են համայնքապետարանի և ներքոհիշյալ կազմակերպությունների հետ:

- Քաղաքային էլեկտրացանց
- կապի ձեռնարկություն
- Գազի շահագործման միջշրջանային վարչություն
- Ճանշին վերանորոգման վարչություն
- Կոմունալ սպասարկման ձեռնարկություն
- Ջրմուղ-կոյուղու ձեռնարկություն

- Պետավտոտեսչություն

Առանձին դեպքերում, երբ ինժեներական ստորգետնյա կառույցները շոշափում են այն կազմկերպությունների շահերը (զինվորական, հատուկ շինարարական, երկաթգիծ և այլն) նախագծերը պետք է նույնպես համաձայնեցվեն նրանց հետ:

2. Արգելվում է հաստատված ինժեներական ցանցերի ծրագծերի (տրասա) փոխումը առանց համայնքի ղեկավարի և շահագրգռված կազմակերպությունների հետ համաձայնեցման: Ծրագրերի տարածայնությունների վերաբերյալ վերջնական որոշում է ընդունվում համայնքապետարանի համապատասխան հարցերի հանձնաժողովի կողմից:

Համաձայնեցված նախագծերը ուժի մեջ են երկու տարվա ընթացքում: Անկախ դրանից յուրաքանչյուր նախագծով կատարվող ինժեներական ցանցերի տեղակայման վերակառուցման աշխատանքները, որոնք կապված են հողածածկի, ասֆալտի և բարեկարգ այլ տարածությունների հետ աշխատանքները սկսելուց առաջ պետք է ունենալ համայնքապետարանի թույլտվությունը:

Առանց համայնքապետարանի հետ համաձայնեցնելու, հողային աշխատանքները կարող են կատարվել սեփական տարածքում կամ օտարման գոտիներում, դրանց ինժեներական կառուցվածքների տնօրինող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների պատասխանատվությամբ, եթե դրանք չեն պահանջում 8-1 կետում նշված ծառայությունների համաձայնությունը, չեն խախտում որևէ մեկի իրավունքները:

Անհատ քաղաքացիներին առանձին վթարների դեպքում թույլատվությունը տրվում է համայնքապետարանի կողմից, 8-1կետում նշված կազմակերպությունների համաձայնության և առաջադրած տեխնիկական պայմանի հիման վրա:

Թույլտվությունները տրվում են պատվիրատու կազմակերպություններին, անհատ քաղաքացիներին, անմիջապես աշխատանք կատարողներին, որը ուժի մեջ է վերջինների համար նշված տեղամասի, աշխատանքի ձևի, ծավալի և ժամանակաշրջանի նշումների դեպքում:

Կարմիր գծերի սահմաններում (փողոցների և թաղամասերի անցումները) ստորգետնյա ինժեներական ցանցերի շինարարության կամ վերանորոգման աշխատանքների կամ վերանորոգման աշխատանքների թույլտվություններն ստանալու համար համայնքապետարան պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

Ճանապարհածածկույթի, ինժեներական ցանցերի տեղակայման, վերանորոգման թերությունների ակտ, նշելով ճանապարհածածկույթի և ինժեներական կառույցների առկա վիճակը և վերանորոգման չափերն ու ծավալները:

Ծրագրի նախագիծը, համաձայնեցված ճարտարապետական բաժնի և 8-1 կետում նշված շահագրգռված կազմակերպությունների հետ:

Կապալառու կազմակերպության կնիքով համաձայնեցված պլան:

Կապալային կազմակերպության հետ պայմանագիր չունեցող կազմակերպությունները բարեկարգման կառույցների վերանորոգման համար պետք է ներկայացնեն երաշխավորագիր-նամակ, ստորագրված պետի և հաշվապահի կողմից:

Աշխատանքի կատարման պատվերները նախօրոք քննարկվում են քաղաքաշինության հանձնաժողովի կողմից, և նրա որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որտեղ նշվում են նաև աշխատանքների կատարման ժամկետները:

Աշխատանքների կատարման թույլտվությունները տրվում են սահմանված վճարները մուծելուց հետո:

Ստորգետնյա և վերգետնյա ինժեներական ցանցերի տեղակայման և վերանորոգման, ինչպես նաև ասֆալտի ծածկի և բարեկարգման այլ էլեմենտների վերականգման աշխատանքները պետք է կատարեն մասնագիտացված կազմակերպությունները: Աշխատանքների կատարման սկզբում պետք է ունենալ ճարտարապետական բաժնի կողմից տրվող տեղակայման արձանագրությունը կարմիր գծերի և օբյեկտների կապումով, ինժեներական կապերի տեխ պայմանի հետ միասին:

Աշխատանքների կատարման ընթացքում պատասխանատու աշխատողի ներկայությունը պարտադիր է:

Աշխատանքներն սկսելու նախօրյակին պետք է տեղյակ պահել ինժեներական ցանցեր ունեցող շահագրգռված կազմակերպություններին, ցանցեր ունեցող կազմակերպություններին՝ ցանցերի տեղը համատեղ ճշտելու, անհամապատասխանությունները պարզելու համար:

Աշխատանքների կատարման տարածքում գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական ցանցերի փչացումից ապահովելու պատասխանատուն է այն անձը, որը ղեկավարում է աշխատանքների կատարումը: Նրանք պարտավոր են կատարելու բոլոր տեխնիկական պահանջները և կազմակերպությունների պայմանները:

Փողոցում, հրապարակներում և մյուս բարեկարգված տարածություններում ստորգետնյա ինժեներական ցանցերի խրամուղիների փորման և լցման, վերգետնյա կառույցների ժամանակ պետք է ապահովվեն հետևյալ պայմանների կատարումը:

Խրամուղու լայնությունները պետք է լինի նվազագույնը, ասֆալտի քանդումը պետք է կատարվի կտրման հատուկ մեքենաներով: Խրամուղիների ու փոսորակների պատերը համաձայն նախագծերի պետք է ամրացվեն, նրանց լցման համար պետք է օգտագործվի մաքուր հող 20սմ-ից ոչ ավելի շերտով, որը պետք է խտացվի համաձայն շինարարական նորմաների:

Ջրահոսների և հեղուկների հեռացումը խրամուղիներից և փոսորակներից պետք է կատարվի միայն դեպի անձրևատարների մեջ: Արգելվում է դրանց լցնելը երթևեկելի մաս կամ մայթի վրա:

Շինարարական, վերակառուցման կամ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո պատասխանատու կատարողը պետք է :

24 ժամվա ընթացքում մաքրի վերանորոգումից հետո մնացած շինարարական մնացորդները:

Կանչել կոմունալ ծառայության կամ փողոցները, մայթերը տարածությունները տնօրինող կազմակերպություններին, պատասխանատու անձերին, ակտով հանձնել վերանորոգված բարեկարգման կառուցվածքները և ասֆալտածածկույթը:

Քանդված մայթերի վերանորոգումը անկախ ծածկույթի ձևերից պետք է կատարվի ամբողջ գոյություն ունեցող լայնությամբ:

Փողոցի երթևեկելի մասի ասֆալտաբետոնային ծածկը վերանորոգվում է նախկին վիճակով, մինչև քանդումը կազմված հատուկ ակտի պահանջներից, խճածածկի դեպքում խրամուղու կրկնակի լայնության չափով:

- Ասֆալտոբետոնյա ծածկույթը լրացվում է մինչև եզրաքարերը, եթե խրամուղու և նրա միջև տարածությունը փոքր է 2մ-ից:
- Վերանորոգված կառուցվածքների տնօրինող կազմակերպության առաջին իսկ պահանջով՝ մեկ տարվա երաշխավորված ժամկետում:

-Ավազապատ և հողածածկ ունեցող տարածությունների վերականգնումը կատարվում է քանդման չափով, որը պետք է հաստատվի երկկողմ ակտավորումով, մինչև աշխատանքների սկսելը:

- Կանաչ տարածությունները վերականգնվում են համաձայն կոմունալ ձեռնարկությունների և կանաչապատման ծառայության պայմանների:

-Վերգետնյա կառույցների (ցանկապատներ, հենասյուներ, ճանապարհային նշաններ և այլն) վերանորոգվում են շինարարության վերանորոգում կատարող կազմակերպությունների կամ անհատների կողմից:

-Ճանապարհածածկույթի վերանորոգման ժամկետները սահմանվում են՝ ելնելով փողոցների նշանակության և աշխատանքների ծավալից: Մագիստրալային և ինտենսիվ շարժման փողոցներում՝ 24, իսկ մյուսներում՝ 48 ժամվա ընթացքում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս պետք է հաշվի առնել սույն կետի պահանջները:

- Վերականգնված ճանապարհային ծածկույթներն ըստ պատկանելության հանձնվում են շահագործող կազմակերպություններին՝ կատարողական գծագրերի հետ միասին:

IX. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Քաղաքաշինական գործունեության վերահսկողությունն իրականացնում է քաղաքաշինական պետական տեսչության Կոտայքի տարածքային բաժինը, Կոտայքի մարզպետը, որը միաժամանակ համակարգում է համայնքի ղեկավարների գործունեությունը քաղաքաշինության բնագավառում:

Ծաղկաձոր համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքների, քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելումը, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 116

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 13-ի N 1/փ-324 եզրակացությունը և Շավարշ Բարեղամի Վարդանյանի դիմումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի փողոց 4-րդ փակուղի թիվ 6 հողամաս հասցեում գտնվող, Շավարշ Բարեղամի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության 0,47888 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0002-0062) հողամասից 0,30832 հա մակերեսով հողամասը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 117

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N 127-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետի և 34-րդ հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 11-ի «Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 127-Լ որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 11-ի N 127-Լ որոշման
փոփոխությունները՝ Ծաղկաձոր համայնքի ավագանու
2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 117-Է որոշմամբ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Գովազդը, գովազդի միջոցը պետք է նախագծված, արտադրված, տեղադրված լինի այնպես, որպեսզի չհանդիսանա վտանգի աղբյուր: Վերոնշյալ պահանջին համապատասխանելու փաստը Ծաղկաձոր համայնքի պահանջով հաստատվում է փորձաքննության միջոցով:

2. Այն դեպքում, երբ գովազդի միջոցի շահագործումը կապակցված է հոսանքի կիրառման հետ, այն պետք է ունենա հոսանքի վթարային անջատման համակարգ:

3. Գովազդը, գովազդի միջոցը բացառությամբ ազդագրերի (афиша), վահանակների և էլեկտրոնային էկրանների վրա տեղադրվող գովազդի, չպետք է պարունակի՝

1) կոնտակտային տվյալներ՝ հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի, ինտերնետ կայքի կամ սոցիալական ցանցերի հասցեներ,

2) առաջարկների, ակցիաների կամ զեղչերի մասին տեղեկատվություն, բացառությամբ ցուցափեղկերում տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի,

3) ապրանքի կամ ծառայության արժեքի մասին տեղեկատվություն, բացառությամբ ավտոլցակայաններում տեղադրվող գովազդի,

4) հայտարարություն, բացառությամբ օբյեկտի բացման, գործունեության մեկնարկի կամ տարեդարձի մասին հայտարարության, որը կարող է տեղադրվել համապատասխան ժամանակահատվածում՝ առավելագույնը 1 (մեկ) ամիս ժամկետով:

5) մեկից ավելի ծառայության կամ ապրանքի մասին տեղեկատվություն (ներառյալ թվարկում կամ բնութագիր) և մեկ ծառայության կամ ապրանքի պատկերից ավել պատկեր:

4. Արտաքին գովազդի, գովազդի միջոցի տեղաբաշխումը (տեղադրումը) չի թույլատրվում.

1) մեկը մյուսի վրա,

2) դեկորատիվ-գեղարվեստական կամ տեքստային պատկերը շենքի, շինության, կառույցի որևէ մակերևույթին (ներառյալ դռան, պատուհանի, ցուցափեղկի, շրջանակի, կամարի հատվածները) նկարելու, ներկելու, կպչուն նյութերով և դեկորատիվ զարդերով փակցնելու կամ փորագրելու միջոցներով,

3) վազող տողով,

4) ձայների, ձայնային սարքերի կիրառմամբ,

5) լազերային համակարգերի և միջոցների կիրառմամբ,

6) նեոնային լամպերի կիրառմամբ,

7) արտաքին լուսավորության կիրառմամբ, բացառությամբ պատի մեծանկարի, կամուրջների և վերնանցումների,

8) մեկ տողի վրա գտնվող ծավալային տառերը տարբեր հորիզոնական առանցքների վրա տեղադրելով,

9) ոչ արդի, ժամանակավրեպ տեղեկատվությամբ,

10) երբ դրանք քաղաքացիների կյանքին, առողջությանը կամ գույքի համար առերևույթ վտանգ են ներկայացնում,

11) կոտրված, վնասված, գունաթափված, պատռված, հնամաշ, կեղտոտ վիճակում,

12) շենքի, շինության կամ այլ կառույցի դեկորատիվ կամ ինքնակպչուն թղթի, պաստառի կամ այլ փափուկ նյութերի կիրառմամբ, բացառությամբ միագույն թափանցիկ փայլատ (матовый) սպիտակ գույնի կամ դրա երանգի ինքնակպչուն ծածկույթի օգտագործման դռան,

պատուհանի և ցուցափեղկի ապակու հատվածների վրա, ինչպես նաև տարածքի վերանորոգման կամ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ շինարարական աշխատանքների ծածկման նպատակով տեղադրման դեպքերի,

13) կտորի կիրառմամբ, բացառությամբ հովարի, ծածկի, հովանոցի, դրոշակի

14) ստվարաթղթի վրա կամ դրա կիրառմամբ,

15) թղթի վրա կամ դրա կիրառմամբ, բացառությամբ ջրի թափանցումից պաշտպանված և համապատասխան թույլտվություն ստացած գովազդի միջոցում տեղադրման դեպքերի,

16) մասնակի կամ ամբողջությամբ ծածկելով պատուհանի, ցուցափեղկի, մուտքի արտաքին մակերեսը,

17) ձևափոխելով շենքի, շինության, մուտքի (դռան), պատուհանի, ցուցափեղկի, տանիքի, կամուրջի, գետնանցումի, վերնանցումի, անցումի ճարտարապետական ոճը և տեսքը կամ դուրս գալով դրանց կառուցվածքային տարրերի սահմաններից և եզրերից,

18) տեղեկատու մասը երթևեկելի մասի մակերևույթից առնվազն 7.0 մետրից ցածր բարձրության վրա, եթե գովազդի, գովազդի միջոցի որևէ մաս գտնվում է ճանապարհի երթևեկելի հատվածի վրա,

19) հուշատախտակներից 1.0 մետրից պակաս հեռավորության վրա,

20) փակելով փողոցների անվանումների կամ շենքի, շինության, կառույցի համարների համայնքի կամ շենքի կառավարման մարմնի կողմից տեղադրված նշանները և դրանցից 1.0 մետրից պակաս հեռավորության վրա,

21) բնության հուշարձանների, ծառերի վրա,

22) արգելափակող միջոցների՝ ցանկապատերի (բացառությամբ քարե ցանկապատերի), ուղեփակոցների, արգելափակոցների, կանգնակների, ճաղերի, պարսպի մուտքի (դռների), բազրիքների (перила) վրա, բացառությամբ նկուղային հարկերի:

23) տառերի և սիմվոլների ուղղահայաց դասավորվածությամբ, բացառությամբ դրոշի և 2.0 մետրից ավել բարձրություն ունեցող բարձակի վրա՝ տեղակայված ոչ բնակելի շենքի 6.0 մետրից բարձր ճակատային հատվածին՝ հաշվարկված գետնի մակերեսից, որոնց վրա գովազդը կարող է պատկերված լինել մեկ տողով դասավորվածությամբ

24) կրկնաձիգ գրաժապավենների (տրանսպարանտ) միջոցով,

25) տրանսպորտային հանգույցներում՝ վերգետնյա անցումների տակ,

26) ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ կամ երբ այն տեսողական նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով) ճանապարհային նշաններին, ճանապարհային երթևեկության կազմակերպման այլ միջոցներին (գույքին),

27) էլեկտրաէներգիայի բաշխման, արտաքին լուսավորության և հեռահաղորդակցության սյուների, հանրային լուսավորության կայանքների, գազամատակարարման, ջրահեռացման, տրանսպորտի, ինչպես նաև ճանապարհային, երկաթուղային, ջրային կամ օդային երթևեկության հետ կապված տարրերի, հանրային սարքավորումների կամ գույքի վրա,

28) գերեզմանատան պատի, մուտքի կամ ճաղերի վրա, ինչպես նաև գերեզմանատան տարածք սահմաններին կից՝ 10.0 մետր շառավղով:

5. Գովազդը, գովազդի միջոցը չպետք է.

1) խոչընդոտեն անձանց ազատ տեղաշարժին և հանդիսանան հետիոտնի շարժման արգելք,

2) խանգարեն փողոցների ու մայթերի մաքրմանը,

3) տեղադրվեն 5 մետրից պակաս լայնություն ունեցող մայթի վրա,

4) սահմանափակեն պատմամշակութային և մշակութային օբյեկտների տեսանելիությունը, գերիշխեն և շեղեն ուշադրությունը տվյալ օբյեկտներից,

5) սահմանափակեն հանրային տրանսպորտի կանգառների սրահների և նշանների տեսանելիությունը,

6) խոչընդոտեն ճանապարհային երթևեկության կազմակերպանն ու անվտանգության ապահովմանը,

7) շփոթեցնեն կամ շեղեն վարորդի կամ հետիոտնի ուշադրությունը, խաթարեն ճանապարհային երթևեկությունը,

8) սահմանափակեն տեսանելիությունն ավտոճանապարհների վրա,

9) լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական որևէ միջոցների՝ ճանապարհային նշանների, լուսացույցների և դրանց կանգնակների, ճանապարհային արգելափակոցների, բազրիքների, պարապետների, ուղղորդ կարճասյուների վրա կամ այնպես, որ փակվի կամ սահմանափակվի դրանց տեսանելիությունը,

10) փորագրվեն, քանդակվեն, որևէ նյութից (տառերի, սիմվոլների տեսքով կամ միջոցով) ներդրվեն պատի, գետնի, աստիճանների վրա կամ դրանց մեջ:

6. Սգո ծիսակատարությունների համար նախատեսված ապրանքների վաճառք իրականացնող առևտրի օբյեկտների գովազդը, գովազդի միջոցը պետք է բաղկացած լինեն «սգո» կամ «պարագաներ» կամ «ծառայություններ» բառերից՝ իրենց համապատասխան հոլովաձևերով և շաղկապներով:

7. Գովազդի, գովազդի միջոցի լուսավորումը թույլատրվում է, եթե այն՝

1) չի հանդիսանում աղմուկի, տատանման, ճառագայթման, էլեկտրամագնիսական դաշտի, թարթող, թրթռացող, անդրադարձող, տատանվող կամ ուժեղ լույսի աղբյուր (օրվա լուսավոր ժամերին՝ 4400 վատտից ոչ ավել, մութ ժամերին՝ 2750 վատտից ոչ ավել),

2) չի առաջացնում երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում՝ նաև անդրադարձող, թարթող, թրթռացող), չի շփոթեցնում կամ շեղում վարորդի կամ հետիոտնի ուշադրությունը, չի խաթարում ճանապարհային երթևեկությունը,

3) չի ներթափանցում բնակելի տարածքներ,

4) ունի խլացված լուսարձակում, իսկ ստատիկ գովազդի դեպքում լույսի մեկ (միագույն)՝ սպիտակ կամ բնական գույն:

8. Վահանակը գովազդային տեղեկատվության տեղադրման համար կոնստրուկցիա է, որը սովորաբար բաղկացած է հիմքից (հիմնասյունից, պատվանդանից), շրջանակից (рамка) և տեղեկատու դաշտից:

9. Վահանակը կարող է լինել միակողմ և բազմակողմ:

10. Միակողմանի վահանակի հակառակ՝ չօգտագործվող կողմը (կողմերը), տեսանելի լինելու դեպքում, պետք է լինի դեկորատիվ ձևավորված:

11. Վահանակի տեղեկատու դաշտը չպետք է լինի առանց պաստառի (դատարկ):

12. Վահանակի վրա տեղադրվող գովազդը չի կարող լինել միայն տեքստային բովանդակությամբ (բացառությամբ ապրանքային նշանի)՝ տեղադրված ֆոնի վրա:

13. Տեքստից և պատկերից բաղկացած գովազդում տեքստի չափաբաժինը չպետք է լինի գովազդի 60%-ից ավելին:

14. Վահանակը կարող է տեղադրվել 3.50 մետրից ավել լայնություն ունեցող մայթի վրա:

15. Ճանապարհի կողային մասում գովազդի միջոց տեղակայելու (տեղադրելու) դեպքում այն պետք է լինի եզրաքար ունեցող ճանապարհի եզրաքարից 0.60 մետրից ոչ պակաս հեռավորության վրա, իսկ եզրաքար չլինելու դեպքում՝ ճանապարհի եզրից ոչ պակաս, քան 3.0 մետրը:

16. Վահանակի հիմքը պետք է տեղադրված լինի ուղղահայաց այն մակերևույթին, որի վրա տեղակայված է, և համապատասխան խորությամբ՝ ըստ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության հետ համաձայնեցված նախագծի:

17. Վահանակի շրջանակը և հիմնասյունը պետք է լինեն միագույն:

18. Վահանակի հենասյունը պետք է պատրաստվի այնպիսի նյութերից, որ քամու ազդեցության հաշվարկային բեռնվածության տակ և շահագործման ընթացքում ապահովի բավարար կայունություն:

19. Վահանակներն, ըստ իրենց տեղեկատու դաշտի չափերի (ներառյալ շրջանակը), լինում են՝

1) մեծ չափի՝ 3.0 մետրից ավել բարձրությամբ, 4.0 մետրից ավել լայնությամբ, 0.60 մետր խորությամբ, ներառյալ միմյանց կցված՝ համակառույց (մուլտիբորդ) վահանակները:

2) միջին չափի՝ առավելագույնը մինչև 3.0 մետր բարձրությամբ, 4.0 մետր լայնությամբ, 0.60 մետր խորությամբ:

3) փոքր չափի՝ առավելագույնը մինչև 3.50 մետր բարձրությամբ, 2.0 մետր լայնությամբ, 0.30 մետր խորությամբ:

20. Հիմնասյան բարձրությունը կարող է լինել 2.50 մետրից մինչև 3.0 մետր փոքր չափի վահանակի դեպքում, մինչև 4.0 մետր՝ միջին չափի վահանակի դեպքում և մինչև 8.0 մետր՝ մեծ չափի վահանակի դեպքում:

21. Փոքր չափի վահանակը կարող է տեղադրվել պատվանդանի վրա: Տվյալ պատվանդանը կարող է լինել առավելագույնը 1.20 մետր բարձրությամբ, 1.40 մետր լայնությամբ և 0.30 մետր խորությամբ:

22. Ծաղկածոր համայնքում որոշմամբ կարող են սահմանվել վահանակի արտաքին տեսքին ներկայացվող հավելյալ պահանջներ:

23. Վահանակի կոնստրուկցիայի հիմքի կամ շրջանակի վրա պետք է տեսանելի ձևով նշված լինի գովազդակրի անվանումը, հեռախոսահամարը և Ծաղկածոր համայնքի ռեգիստրում գրանցման համարը:

24. Որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա մեծ չափի վահանակների միջև հեռավորությունը չի կարող պակաս լինել 200.0 մետրից:

25. Մեծ չափի վահանակ Ծաղկածոր համայնքում տեղադրվել (տեղադրված լինել) չի կարող, բացառությամբ պատի մեծանկարի:

26. Միջին չափի վահանակ կարող է տեղադրվել (տեղադրված լինել) խաչմերուկներում:

27. Հենասյան վրա տեղադրված միջին չափի վահանակի որևէ մաս չի կարող լինել ճանապարհի երթևեկելի հատվածի վրա:

28. Յուրաքանչյուր խաչմերուկում, որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա, չի կարող տեղադրվել 1-ից ավելի միջին չափի վահանակ:

29. Որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա միջին չափի վահանակների միջև հեռավորությունը չի կարող պակաս լինել 150.0 մետրից:

30. Միջին չափի վահանակները չեն կարող լինել միմյանց կցված՝ համակառույց (մուլտիբորդ) վահանակների տեսքով:

31. Փոքր չափի վահանակ թույլտարելի է տեղադրել ցուցափեղկում, կանգառասրահում:

32. Փոքր չափի վահանակ որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա թույլտարելի է տեղադրել մայրուղիներում, պողոտաներում, փողոցներում, խաչմերուկներում, հրապարակներում՝ իրարից նվազագույնը 50.0 մետր շառավիղով հեռավորության վրա, բացառությամբ սքրոլլերների:

33. Փոքր չափի վահանակի որևէ մաս չի կարող լինել ճանապարհի երթևեկելի հատվածի վրա:

34. Սքրոլլերը ստատիկ գովազդային տեղեկատվության տեղադրման համար նախատեսված դինամիկ մակերեսով փոքր չափի վահանակ է :

35. Սքրոլլերների միջև հեռավորությունը կարող է լինել նվազագույնը մինչև 8.0 մետր, եթե դրանց տեղեկատու մակերեսի և շրջանակի յուրաքանչյուր կողմը չի գերազանցում 2.60 քմ-ը, իսկ սքրոլլերների քանակը՝ 6-ից ոչ ավել է:

36. Պրիզմատրոնը գովազդային տեղեկատվության տեղադրման համար դինամիկ մակերես նախատեսող վահանակ է՝ բաղկացած շրջանակից և տեղեկատու դաշտից, որն ունի իր առանցքի շուրջը պտտվող եռանկյուն հատվածակողմեր (призма), երբեմն նաև հիմքից:

37. Պրիզմատրոնի նկատմամբ կիրառելի են վահանակին ներկայացվող պահանջները:

38. Էլեկտրոնային էկրանն (ցուցարկիչ, մոնիտոր, հեռուստաէկրան) արտաքին գովազդի միջոց է՝ նախատեսված տեղեկատու մակերեսի վրա պատկերներ վերարտադրելու համար՝ լուսադիոդների (LED), լամպերի, այլ լույսի աղբյուրների կամ արտացոլող տարրերի լույսի արտանետման կիրառմամբ:

39. Էլեկտրոնային էկրանը կարող է տեղադրվել որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա կամ որևէ օբյեկտի վրա տեղակայված կամ ներկառուցված գովազդի միջոց:

40. Էլեկտրոնային էկրանի տեղեկատու դաշտի չափերը, որպես առանձին կոնստրուկցիա տեղակայված լինելու դեպքում, պետք է համապատասխանեն վահանակին ներկայացվող պահանջներին:

41. Որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա էլեկտրոնային էկրանների հիմքի (հենասյան, պատվանդանի) բարձրությունը, լայնությունը և խորությունը, յուրաքանչյուր դեպքում համաձայնեցվում է Ծաղկաձոր համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների ,գովազդի և տուրիզմի բաժնի հետ: Միևնույն ժամանակ կոնստրուկցիայի առավելագույն չափը չի կարող գերազանցել վահանակի կոնստրուկցիային ներկայացվող պահանջների չափը՝ համապատասխան դրա տեղեկատու դաշտի տեսակի:

42. Էլեկտրոնային էկրանը, որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա, կարող է տեղադրվել բացառապես լուսացույցով կարգավորվող ճանապարհային հատվածներում՝ խաչմերուկներում և ճանապարհների կենտրոնական բաժանարար գոտիներում և գետնի մակարդակից առնվազն 2.50 մետր բարձրության վրա:

43. Որպես առանձին տեղակայված կոնստրուկցիա էլեկտրոնային էկրանի հիմքի կամ շրջանակի վրա պետք է տեսանելի ձևով նշված լինեն գովազդակրի անվանումը, հեռախոսահամարը և Ծաղկաձորի համայնքապետարանի ռեգիստրում գրանցման համարը:

44. Յուրաքանչյուր խաչմերուկում և ճանապարհների կենտրոնական բաժանարար գոտում, որպես առանձին տեղակայված կառույց, չի կարող տեղադրվել 1-ից ավելի էլեկտրոնային էկրան:

45. Որպես առանձին տեղակայված կառույց էլեկտրոնային էկրանների միջև հեռավորությունը չի կարող պակաս լինել 200.0 մետրից:

46. Շենքի, շինության, կառույցի կամ ցուցափեղկում տեղադրված էլեկտրոնային էկրանների (հեռուստացույցի) հեռավորությունը միմյանցից չի կարող լինել 20.0 մետրից պակաս:

47. Շենքի, շինության, կառույցի վրա տեղադրվող էլեկտրոնային էկրանի համար, բացառությամբ ցուցափեղկում տեղադրվող էլեկտրոնային էկրանների, Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, զբոսաշրջության և գովազդի բաժնի կողմից կարող են սահմանվել առանձին չափորոշիչներ՝ կապված բարձրության և տեղեկատու դաշտի մակերեսի հետ, որոնք հաշվի են առնում տվյալ տարածքի ճարտարապետական առանձնահատկությունները:

48. Բարձակը ստատիկ մակերես նախատեսող վահանակային կոնստրուկցիա է՝ բաղկացած հիմքից, շրջանակից և տեղեկատու դաշտից, որը տեղադրվում է ամրակցող մակերեսին ուղղահայաց՝ ուղիղ անկյան տակ:

49. Բարձակը լինում է ուղղանկյուն կամ կլոր երկրաչափական ձևերի, բացառությամբ դեղատնային ապրանքների առևտրով զբաղվող սուբյեկտների կողմից տեղադրվող բարձակների:

50. Հենասյանն ամրակցվող բարձակի առավելագույն չափը՝ ներառյալ շրջանակը, չի կարող գերազանցել 2.0 մետր բարձրությունը, 1.40 մետր լայնությունը՝ ներառյալ ամրակները, և 0.30 մետր խորությունը:

51. Շենքի, շինության, կառույցի ճակատային հատվածին ամրակցվող բարձակի առավելագույն չափը, ներառյալ շրջանակը, չի կարող գերազանցել 0.5 մետր բարձրությունը, 0.5 մետր լայնությունը՝ ներառյալ ամրակները, և 0.50 մետր խորությունը, եթե այն տեղակայված է մինչև 6.0 մետր բարձրության վրա՝ հաշվարկված հողից:

52. Շենքի, շինության, կառույցի ճակատային հատվածին ամրակցվող բարձակի առավելագույն չափը՝ ներառյալ շրջանակը, չի կարող գերազանցել 3.0 մետր բարձրությունը, 1.0 մետր լայնությունը՝ ներառյալ ամրակները, 0.30 մետր խորությունը, եթե այն տեղակայված է 6.0 մետրից ավելի բարձրության վրա՝ հաշվարկված գետնի մակերեսից:

53. Շահագործման անվտանգության նպատակից ելնելով՝ բարձակի որևէ մաս չի կարող տեղադրվել ճանապարհի երթևեկելի հատվածի վրա:

54. Շենքի, շինության, կառույցի վրա կամ բոլոր այլ դեպքերում տեղադրվող բարձակները պետք է տեղադրվեն գետնի մակերևույթից ոչ պակաս, քան 2.50 մետր բարձրության վրա:

55. Բարձակը չպետք է գտնվի ամրակցվող հարթությունից ավելի քան 0.20 մետր հեռավորության վրա:

56. Բարձակների ամրակները պետք է լինեն միագույն՝ մուգ կամ բնական նյութերի գույնի (փայտի, քարի, մետաղական)՝ ամրակցվող մակերեսին կամ շենքի, շինության հիմնական գույնին համահունչ, որի վրա տեղադրվում են:

57. Բարձակների ամրակները կարող են լինել կախովի, թաքնված կամ պատից ամրացված:

58. Բարձակը կարող է ապահովված լինել միայն ներկառուցված ստատիկ լուսավորությամբ՝ արտաքին գովազդի լուսավորության չափանիշներին համապատասխան:

59. Բարձակները չեն կարող լինել առանց պաստառների (դատարկ): Դատարկ բարձակները ենթակա են ապամոնտաժման:

60. Արգելվում է բարձակները տեղադրել մեկը մյուսից 10.0 մետրից պակաս հեռավորության վրա:

61. Միևնույն հիմքի (հենքի, հենասյան) վրա չի կարող տեղադրվել մեկից ավելի բարձակ:

62. Միևնույն ճակատային կողմում մեկ սուբյեկտի կողմից չի կարող տեղադրվել մեկից ավելի բարձակ:

63. Բացառությամբ դեղատնային ապրանքների առևտրով զբաղվող սուբյեկտների կողմից շենքի տեղադրվող բարձակների, շենքի, շինության, կառույցի ճակատային հատվածում բարձակը տեղադրվում է որպես միակ գովազդ (գովազդի միջոց). բարձակի տեղադրման դեպքում նույն տնտեսվարողի կողմից չի կարող տեղադրվել այլ գովազդ (գովազդի միջոց), բացառությամբ ցուցափեղկում լուսային տուփի կամ էկրանի ձևով տեղադրվող գովազդի:

64. Միևնույն ճակատի վրա բարձակները պետք է տեղադրվեն մեկ հորիզոնական առանցքի վրա՝ պահպանելով միմյանց նկատմամբ չափերի համաչափությունը:

65. Դեղատնային ապրանքների առևտրով զբաղվող կազմակերպություններին թույլատրվում է բժշկական հավասարակողմ (1:1 հարաբերակցությամբ) խաչի տեսքով պատրաստված բարձակի տեղադրում պատից:

66. Բժշկական հավասարակողմ խաչի տեսքով բարձակը կարող է պարունակել տեղեկատվություն շուրջօրյա գործունեության մասին՝ ստատիկ պատկերված «24» թվի տեսքով՝ շուրջօրյա գործունեություն ծավալելու դեպքում:

67. Բժշկական հավասարակողմ խաչի տեսքով բարձակը պետք է լուսավորվի միայն դեղատան աշխատանքային ժամերին:

68. Շենքի, շինության, կառույցների արտաքին մակերևույթների վրա գովազդը, գովազդի միջոցը թույլատրվում է տեղաբաշխել (տեղադրել) ճակատի հարթ՝ ճարտարապետական տարրերից զերծ հատվածներում:

69. Շենքի, շինության, կառույցների արտաքին մակերևույթների վրա գովազդը, գովազդի միջոցը թույլատրվում է տեղաբաշխել բացառապես.

1) բարձակի միջոցով,

2) ճակատի հարթությանը զուգահեռ տեղադրվող ուղղահայաց տառերով (ներառյալ ապրանքային նշանի պատկերը)՝ առավելագույնը 2 տողով հորիզոնական դասավորվածությամբ, առանց տակդիրի կամ ամբողջությամբ թափանցիկ տակդիրի կիրառմամբ, եթե գովազդի (գովազդի միջոցի) երկարությունը չի գերազանցում 2.0 մետրը,

3) դրոշակի միջոցով, որի նկատմամբ կիրառելի են բարձակներին ներկայացվող չափորոշիչները:

70. Շենքի, շինության, կառույցների արտաքին մակերևույթների վրա գովազդի, գովազդի միջոցի առավելագույն միասնական հաշվարկված ընդհանուր բարձրությունը կարգավորվում է ըստ գովազդի, գովազդի միջոցի բարձրության.

1) մինչև 4.0 մետր բարձրության դեպքում տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի առավելագույն բարձրությունը, մեկ տողի պարագայում, չպետք է գերազանցի 0.30 մետրը, իսկ երկու տողի պարագայում՝ 0.50 մետրը,

2) 4.0-ից մինչև 9.0 մետր բարձրության դեպքում տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի առավելագույն բարձրությունը մեկ կամ երկու տողի պարագայում չպետք է գերազանցի 0.50 մետրը,

3) 9.0-ից մինչև 15.0 մետր բարձրության դեպքում տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի առավելագույն բարձրությունը մեկ կամ երկու տողի պարագայում չպետք է գերազանցի 1.0 մետրը,

4) 15.0 մետր և ավել բարձրության դեպքում տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի առավելագույն բարձրությունը, մեկ կամ երկու տողի պարագայում չպետք է գերազանցի 2.0 մետրը,

71. Շենքի, շինության, կառույցների արտաքին մակերևույթների վրա գովազդի, գովազդի միջոցի տեղադրումը չի թույլատրվում տակդիրի (подложка) կիրառմամբ, այդ թվում այն դեպքում, երբ գովազդատուի (գովազդակրի) կողմից տեղադրվող գովազդը, գովազդի միջոցը գրանցված է որպես ապրանքային նշան, բացառությամբ ամբողջությամբ թափանցիկ տակդիրի կիրառման:

72. Շենքի, շինության, կառույցների արտաքին մակերևույթի վրա հորիզոնական դասավորվածությամբ ուղղահայաց տառերով գովազդը, գովազդի միջոցը տեղաբաշխվում (տեղադրվում) են.

1) մուտքի կամ պատուհանների (ցուցափեղկերի) վերևում և դրանց սահմաններում՝ առանց ելուստի կամ սահմաններից դուրս առավելագույնը 0.30 մետր ելուստով ամեն կողմից՝ պահպանելով տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի համաչափությունը մուտքի և պատուհանի նկատմամբ,

2) տնտեսվարողի կողմից զբաղեցրած տարածքի սահմաններում՝ դռան և պատուհանների (կամ միայն պատուհանների) միջև ընկած միջնապատի վրա՝ պահպանելով ներդաշնակություն ճակատի վրա տեղադրված այլ գովազդների, գովազդի միջոցների հետ:

3) ճարտարապետական ֆրիզի վրա՝ առանց տակդիրի (подложка), բացառությամբ թափանցիկ տակդիրի կիրառման:

73. Շենքի, շինության, կառույցի արտաքին մակերևույթի վրա տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի մակերեսը չպետք է դուրս գա ճակատի հարթությունից ավելի քան 0.20 մետր:

74. Արգելվում է գովազդի, գովազդի միջոցի տեղաբաշխումը (տեղադրումը) բազմաբնակարան շենք-շինության 1-ին և 2-րդ հարկերի միջև ընկած բաժանարարից վերև:

75. Եթե տարածքը գտնվում է նկուղային կամ կիսանկուղային հարկում գովազդը, գովազդի միջոցը կարող է տեղադրվել.

1) նկուղի կամ կիսանկուղի մուտքի դռան և պատուհանի վերևում և դրանց սահմաններում՝ առանց ելուստի կամ սահմաններից դուրս առավելագույնը 0.15 մետր ելուստով ամեն կողմից՝ պահպանելով տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի համաչափությունը մուտքի և պատուհանի նկատմամբ,

2) նկուղի կամ կիսանկուղի տարածքում, բայց ոչ ցածր, քան գետնի մակարդակից մինչև գովազդի, գովազդի միջոցի ստորին եզրը պահպանելով 0.60 մետր բարձրություն:

3) նկուղի կամ կիսանկուղի աստիճանավանդակին կից հենապատի վրա տեղադրված մեկ լուսամփոփի վրա, որի արտաքին չափերը պետք է լինեն 1.45 մետր բարձրությամբ, 0.35 մետր լայնությամբ, որից հենասյան հատվածը պետք է լինի 0.35 մետր բարձրությամբ, լուսամփոփի բարձրությունը՝ 0.45 մետր, իսկ գովազդի, գովազդի միջոցի բարձրությունը՝ 0.65 մետր:

4) եթե չկա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու որևէ այլ հնարավորություն, նկուղի կամ կիսանկուղի աստիճանավանդակին կից հենապատի վրա տեղադրված բազրիքին ներկառուցման միջոցով՝ առավելագույնը (հանրագումարում) 1.0 քմ տարածքով:

76. Շենքի, շինության, կառույցի (բացառությամբ նկուղային կամ կիսանկուղային հատվածի) վրա տեղաբաշխվող (տեղադրվող) գովազդը, գովազդի միջոցը չի կարող կպած լինել դռան, պատուհանի կամ ցուցափեղկի շրջանակին և պետք է դրանցից լինի առնվազն 0.15 մետր հեռավորության վրա:

77. Շենքի, շինության, կառույցի արտաքին մակերեսի վրա գովազդը, գովազդի միջոցը պետք է տեղադրվի տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից զբաղեցրած արտաքին մակերեսի սահմաններում:

78. Շենքի, շինության, կառույցի արտաքին մակերեսների վրա տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի առավելագույն երկարությունը պետք է լինի շենքի ճակատի երկարության 70 տոկոսից ոչ ավել:

79. Արգելվում է շենքի, շինության, կառույցի արտաքին մակերեսը դեկորատիվ պանելներով, սալիկներով կամ այլ միջոցներով երեսպատելը, ֆասադի տեսքի, գույնի կամ այլ փոփոխություն կատարելը գովազդ, գովազդի միջոց տեղադրելու նպատակով կամ, երբ դրանք փաստացի օգտագործվում են գովազդի կամ գովազդի միջոցի տեղադրման համար:

80. Շենքի, շինության, կառույցի պատերի վրա տեղադրվող գովազդը, գովազդի միջոցը չի կարող ունենալ տակդիր (подложка), բառառությամբ ամբողջությամբ թափանցիկ տակդիրի կիրառման և չպետք է ծածկի ճարտարապետական տարրերը, պետք է տեղադրվի դրանցից 0.30 մետրից ոչ պակաս հեռավորության վրա:

81. Շենքի, շինության, կառույցի պատերի վրա տեղադրվող գովազդը կարող է ապահովված լինել միայն ներկառուցված կամ ետնային լուսավորությամբ՝ արտաքին գովազդի լուսավորության չափանիշներին համապատասխան:

82. Գովազդի միջոցը չպետք է գործածվի որպես ծածկ կամ տանիք:

83. Յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտ շենքի, շինության, կառույցի նույն կողմում գտնվող ճակատի վրա իրավունք ունի տեղաբաշխել (տեղադրել) ոչ ավելի, քան երկու գովազդ, գովազդի միջոց, բացառությամբ մարկիզների և ցուցափեղկերի:

84. Եթե շենքի, շինության, կառույցի միևնույն ճակատում տեղակայված է մի քանի գովազդ, գովազդի միջոց, ապա դրանք պետք է լինեն մեկ հորիզոնական առանցքի վրա ճակատի ուղղահայաց հարթության նկատմամբ:

85. Արգելվում է գովազդի, գովազդի միջոցի տեղաբաշխումը (տեղադրումը).

1) շենքի, շինության, կառույցի եզրային կամ ճարտարապետական սահմաններից դուրս՝ ելուստով կամ դրանց կից՝ 0.50 մետրից մոտ հեռավորության վրա,

2) առանց շենքի, շինության ճարտարապետական բաժանումներն ու առանձնահատկությունները հաշվի առնելու կամ շենքի, շինության, կառույցի ճարտարապետական դետալների (այդ թվում՝ սյան, որմնասյան (пилястра), զարդանախշի, հարթաքանդակի (барельеф), քիվի (карниз) վրա կամ դրանց կից՝ 0.30 մետրից մոտ հեռավորության վրա,

3) շենքի, շինության, կառույցի պատշգամբի, դրա ճաղերի, ճաղաշարքերի (балюстрада) կամ ծածկի վրա,

4) շենքի, շինության, կառույցի տանիքի ճաղերին և դրանց տարրերի՝ ճաղավանդակների, սյուների, ձողերի, դեկորների, վրա ամրացնելու միջոցով,

5) շենքի, շինության, կառույցի ծածկի (ներառյալ մուտքի ծածկի) և ճարտարապետական հովհարի (козырек) վրա, ինչպես նաև հավելյալ կոնստրուկցիայի կամ գովազդի միջոցի դրանց վրա ամրակցմամբ, բացառությամբ ֆրիզի հատվածի սահմաններում տեղադրման դեպքի՝ առանց ելուստների և եզրերից 0.50 մետրից պակաս հեռավորության վրա:

6) ճարտարապետական ֆրիզի սահմաններից դուրս՝ առանց ելուստների և եզրերից 0.5 մետրից պակաս հեռավորության վրա,

7) շենքի բնակելի հատվածների սահմաններում, այդ թվում՝ ճակատի խուլ պատերին, բացառությամբ պատի մեծանկարների,

8) բազմաբնակարան շենք-շինությունների, կառույցի շքամուտքի տարածքում՝ դռան շրջանակի վրա կամ դրան կից՝ շրջանակից 0.50 մետրից ոչ պակաս հեռավորության վրա,

9) ոչ հիմնական, ոչ ստացիոնար կառույցի, կրպակի, կրպակաշարի, կցակառույց օբյեկտի, ավտոտնակի և դրանց տանիքների վրա, բացառությամբ դրանց ֆրիզային հատվածների (ներառյալ հովարներն ու ծածկերը) և ցուցափեղկի, որոնց վրա գովազդը թույլատրվում է տեղադրել յուրաքանչյուր ցուցափեղկի փեղկի մակերեսի 75 տոկոսից ոչ ավելի չափով,

10) շենքի և շինության կամարի, կամարանցումի և կամարակապ բացվածքով սահմանափակված տարածքի մեջ և դրանցից 1 մետրից պակաս հեռավորության վրա,

11) շենքի, շինության, կառույցի ճակատային այն հատվածի վրա, որտեղ նախկինում տեղադրված գովազդի, գովազդի միջոցի տեղադրման հետևանքով կամ այլ պատճառով առկա են անցքեր, վնասվածքներ: Նշված հատվածում գովազդ, գովազդի միջոցի տեղադրելու թույլտվություն կարող է տրվել բացառապես նշված անցքերի, վնասվածքների վերականգնման (լցման) դեպքում,

12) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է տվյալ մարմնի համաձայնությունը,

13) թանգարանների, պատմական և ճարտարապետական հուշարձանների, դրանց տարածքում և տանիքների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է լիազոր մարմնի համաձայնությունը:

86. Շենքի, շինության, կառույցի վրա արտաքին գովազդ տեղադրելու այլ կանոններ սահմանված լինելու դեպքում, այդ կանոնները կիրառվում են, եթե չեն հակասում սույն որոշմամբ նախատեսված չափորոշիչներին:

87. Գովազդի միջոցների որոշակի տեսակների համար Ծաղկաձորի համայնքապետարանը կարող է սահմանել ստանդարտ ձևեր, ինչպես նաև դրանց տեղադրման սկզբունքներ:

88. Ճարտարապետական ֆրիզը ռելիեֆներից և զարդանախշերից զերծ շենքի, շինության, կառույցի արտաքին պատի վերին կամ միջհարկային մասը շրջանակող, ժապավենի տեսք ունեցող ճարտարապետական տարր է:

89. Շենքի, շինության, կառույցի ճակատների (արտաքին պատերի) վրա, ճարտարապետական ֆրիզի առկայության դեպքում, որը գտնվում է 1-ին և 2-րդ հարկերի միջև վերածածկի մակարդակում կամ դրանից ներքև, գովազդը, գովազդի միջոցը, պատի ճակատային այլ հատվածներին տեղադրելու փոխարեն, պետք է տեղակայվի բացառապես ճարտարապետական ֆրիզի տարածքում:

90. Ճարտարապետական ֆրիզի վրա գովազդը, գովազդի միջոցը թույլտարվում է տեղադրել ծավալային տառերով՝ առանց տակդիրի (подложка), բացառությամբ թափանցիկ տակդիրի կիրառման:

91. Ֆրիզի վրա տեղադրելու դեպքում գովազդի միջոցի տեղեկատվական դաշտը, ինչպես նաև դեկորատիվ-գեղարվեստական տարրերը չպետք է գերազանցեն ֆրիզի բարձրության 70 տոկոսը, միևնույն ժամանակ, գովազդի մակերեսը չպետք է դուրս գա ճակատի հարթությունից ավելի քան 0.20 մետր, իսկ առավելագույն երկարությունը չպետք է լինի տնտեսվարող սուբյեկտի կողմից զբաղեցրած տարածքի սահմաններից դուրս:

92. Պատի մեծանկարը գովազդային տեղեկատվության տեղադրման համար միակողմանի, ստատիկ մակերես նախատեսող վահանակ է՝ բաղկացած շրջանակից, տեղեկատու դաշտից և պատին կցվող ամրակներից:

93. Պատի մեծանկարը կարող է տեղադրվել շենքի, շինության, կառույցի առնվազն 4.0 մետր լայնություն ունեցող խուլ պատի վրա: Սույն կանոնների իմաստով խուլ պատ է համարվում վերից վար առանց մուտքի, պատուհանի, ցուցափեղկի պատի հատվածը:

94. Պատի մեծանկարի թույլատրելի չափերը որոշվում են ըստ անհատական դեպքի և տեղաբաշխվում պատի անկյունային եզրերից առնվազն 0.50 մետր հեռավորության վրա:

95. Մեկ պատին կարող է տեղադրվել առավելագույնը մեկ պատի մեծանկար:

96. Պատի մեծանկարը ամրակցվում է անմիջապես պատին և չպետք է գտնվի ամրակցվող հարթությունից հեռավորության վրա:

97. Պատի մեծանկարի առավելագույն խորությունը կարող է լինել առավելագույնը 0.50 մետր խորությամբ:

98. Յուրաքանչյուր տեղադիրի համար Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից սահմանվում են առանձին չափորոշիչներ՝ կապված պատի մեծանկարի բարձրության հետ՝ հաշվի առնելով տվյալ տարածքի ճարտարապետական առանձնահատկությունները:

99. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակի չափը չպետք է գերազանցի 0.40 մետր բարձրությունը և 0.60 մետր երկարությունը և պարունակի օրենքով նախատեսվածից ավելի տեղեկություն:

100. Ցուցանակները տեղադրվում են տեսանելի վայրում՝ ճակատի հարթ, ճարտարապետական տարրերից զերծ հատվածներում, անմիջապես մուտքի աջ և ձախ կողմում, կամ տարածքի մուտքի դռների վրա, որտեղ փաստացի գտնվում է (գործունեություն է իրականացնում) կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը: Դռան վրա տեղադրվող տեղեկատվական ցուցանակը կարող է նաև տեղադրվել տրաֆարետային տպագրության կամ նմանատիպ մեթոդների օգտագործմամբ՝ անմիջապես փակցվելով դռան ապակու վրա:

101. Մի քանի կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի միևնույն մուտքի մոտ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխանող ցուցանակ տեղադրելու դեպքում տեղադրված տեղեկատվական միջոցների միասնական ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի 2.0 քմ-ը, գետնի (հաշվարկված մուտքի հատակից) մակարդակից բարձրությունը մինչև ամենաբարձր մակարդակում տեղակայված ցուցանակի վերին եզրը չպետք է գերազանցի 2.0 մ-ը, իսկ ցուցանակները պետք է տեղադրվեն միմյանց զուգահեռ և միանման ձևավորմամբ:

102. Դռան, 1-ին և 2-րդ հարկերի ցուցափեղկերի (պատուհանների) ապակեպատ հատվածներին, ինչպես նաև այդ հատվածներից դեպի ներս մինչև 0.60 մետր հեռավորության վրա (տեսանելի լինելու դեպքում), առանձնացված ապակեպատ պահարանում տեղադրված տեղեկատվությունը (տարբեր տեսակի տեղեկատվական միջոցները) համարվում են արտաքին գովազդ, այսուհետ նաև՝ ցուցափեղկային գովազդ (витринная реклама):

103. Ցուցափեղկային գովազդը թույլատրվում է տեղադրել.

1) ներսի կողմից,

2) առանց տակդիրի առանձին տառերի (ներառյալ ապրանքային նշանի պատկերը) միջոցով,

3) փոքր չափի վահանակների վրա,

4) փոքր չափի էլեկտրոնային էկրանների միջոցով,

5) կոմպոզիցիոն լուծումների միջոցով,

6) շրջանակի (փեղկի) բոլոր կողմերից պահպանելով առնվազն 0.30 մետր, իսկ ծավալային տառերի դեպքում՝ 0.15 մետր հեռավորություն

7) զբաղեցնելով (փակելով) փեղկի 75 տոկոսից ոչ ավելին, բացառությամբ տվյալ տարածքի վերանորոգման կամ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ շինարարական աշխատանքների ծածկման նպատակով տեղադրման դեպքերի և առանձին տառերի:

104. Վերանորոգման կամ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ շինարարական աշխատանքների ծածկման նպատակով, ցուցափեղկը թույլատրվում է ամբողջությամբ փակել ինքնակպչուն ծածկույթի օգտագործմամբ:

105. Ցուցափեղկի վրա հորիզոնական դասավորվածությամբ առանձին ծավալային տառերի տեսքով գովազդային տեղեկատվության թույլատրելի տարածքի միասնական հաշվարկված առավելագույն բարձրությունը կարող է լինել մինչև 0.50 մետրը, իսկ առանձին տողի առավելագույն բարձրությունը՝ մինչև 0.30 մետրը, տառերի հաստությունը՝ ոչ ավելի, քան 0.10 մետրը:

106. Ցուցափեղկում տեղադրվող գովազդը, գովազդի միջոցները պետք է պահպանեն միմյանց հանդեպ նույնաձև չափերի և տարածությունների համաչափություն՝ իրարից տեղադրվելով 0.30 մետրից ոչ պակաս հեռավորության վրա:

107. Ցուցափեղկում տեղադրվող գովազդի միջոցը կարող է ապահովված լինել բացառապես ներքին կամ ետնային լուսավորությամբ՝ արտաքին գովազդի լուսավորության չափանիշներին համապատասխան:

108. Կախովի գովազդը, գովազդի միջոցը ստատիկ մակերես նախատեսող վահանակային կոնստրուկցիա է՝ բաղկացած ամրակներից, շրջանակից և տեղեկատու դաշտից, որը տեղադրվում է ամրակցող մակերեսի տակ՝ կցվելով վերևից:

109. Կախովի գովազդը, գովազդի միջոցը թույլատրվում է տեղադրել շենքերի, շինությունների, կառույցների հետիոտնային անցումների ուղղանկյունաձև (առանց կամարի) սրահային տարածքներում:

110. Կախովի գովազդը, գովազդի միջոցը չպետք է դուրս գա ճակատի արտաքին կամ ներքին հարթություններից, իսկ դրա առավելագույն բարձրությունը չպետք է գերազանցի 0.5 մետրը:

111. Կախովի գովազդի միջոցը պետք է գետնից պահպանի առնվազն 2.50 մետր բարձրություն՝ վերին և կողային հատվածից պահպանելով 0.30 մետր հեռավորություն:

112. Հովարը (маркиза) շենքի, շինության, կառույցի դռան, պատուհանի, ցուցափեղկի վերևի հատվածում ծալվող կամ չծալվող կտորե ծածկույթ է:

113. Սույն կանոնների իմաստով ծածկը բացօթյա ոչ մեկուսացված կտորե կոնստրուկցիա է, որը տեղակայված է հենարանների (սյուների) վրա մի կողմից և ամրակցված է պատին մյուս կողմից:

114. Հովանոցը սովորաբար փայտյա կամ մետաղյա ելուստներով, մեջտեղի մասում հենասյան վրա ամրացված կտորե ծալովի ծածկույթով հարմարանք է՝ նախատեսված արևից կամ տեղումներից պաշտպանվելու համար:

115. Հովարի, ծածկի և հովանոցի վրա թույլատրելի է պատկերել միայն գովազդվող օբյեկտի ապրանքային նշանի պատկերը և անվանումը:

116. Հովարը կարող է տեղադրվել մուտքի, պատուհանի, ցուցափեղկի վերին եզրին և բացառապես դրանց սահմաններում:

117. Ծածկը կարող է տեղադրվել մուտքի, պատուհանի, ցուցափեղկի վերին եզրին կամ դրանցից բարձր, սակայն առավելագույնը մինչև 0.50 մետր բարձրության վրա և տնտեսվարողի կողմից փաստացի զբաղեցրած տարածքի սահմաններում:

118. Հովանոցի, հովարի և ծածկի վրա տեղադրվող գովազդը պետք է պատկերված լինի բացառապես ֆրիզի հատվածում մեկ տողով, որի բարձրությունը չպետք է գերազանցի 0.30 մետրը, իսկ տեղեկատու դաշտի տարրերը պետք է տեղադրվեն մեկ հորիզոնական առանցքի վրա:

119. Հովարը պետք է համահունչ լինի շենքի, շինության ճակատի ճարտարապետական ընդհանրական տեսքին և բաժանումներին:

120. Հովարի կոնստրուկցիայի չափը չի կարող ծածկել փեղկի բարձրության 1/4-ից ավելին:

121. Հովարի կոնստրուկցիայի չափը՝ բացված վիճակում, չի կարող լինել 1.20 մետրից ավելի խորություն (ճակատից դեպի առաջ):

122. Հովարի և ծածկի կոնստրուկցիաների ամրակները, տեսանելի լինելու դեպքում, պետք է լինեն միագույն, իսկ պատից ամրակցված լինելու դեպքում՝ մուգ գույնի (մետաղի, քարի, փայտի գույնի) կամ շենքի, շինության հիմնական գույնին համահունչ, որի վրա տեղադրվում են:

123. Շենքի, շինության, կառույցի տանիքներին թույլատրելի է տեղաբաշխել (տեղադրել) միայն առանձին ծավալային տառերից և սիմվոլներից բաղկացած գովազդի միջոց՝ տանիքի հանդեպ տառերի հորիզոնական և մինչև երկու տողով դասավորվածությամբ՝ առանց տակդիրի:

124. Շենքի, շինության, կառույցի տանիքին տեղադրվող գովազդ, գովազդի միջոց հանդիսացող տանիքային կոնստրուկցիաները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ: Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է պատրաստված լինեն մինիմալ տեսանելի, ամուր և հակակոռոզիոն նյութերից:

125. Շենքի, շինության, կառույցի տանիքներին տեղադրվող գովազդի միջոցում թույլատրվում է օգտագործել ներկառուցված լուսավորություն՝ արտաքին գովազդի լուսավորության չափանիշներին համապատասխան:

126. Շենքի, շինության, կառույցի տանիքներին տեղադրվող գովազդ, գովազդի միջոցը պետք է լինեն ճակատի ուղղահայաց բաժանումներին համապատասխան, առանց ելուստների և դուրս չգան ճակատի հիմնական հարթությունից՝ դեպի առաջ:

127. Շենքի, շինության, կառույցի տանիքներին տեղադրվող գովազդի, գովազդի միջոցի լայնությունը չի կարող գերազանցել ճակատի լայնության 4/5 մասը՝ մինչև 35.0 մետր ճակատային լայնության դեպքում, և ճակատի լայնության կեսը՝ 35.0 մետրից ավելի ճակատային լայնություն դեպքում:

128. Մինչև 50.0 մետր ճակատային լայնություն ունեցող շենքի, շինության, կառույցի տանիքի միևնույն կողմում նույն հարթության վրա չի կարող տեղադրվել մեկից ավելի գովազդի միջոց:

129. 50.0 մետրից ավելի ճակատային լայնություն ունեցող շենքի, շինության, կառույցի տանիքի միևնույն կողմում մեկ հորիզոնական հարթության վրա տեղադրվող մեկից ավելի գովազդի միջոցների միմյանցից հեռավորությունը չի կարող լինել պակաս, քան 50.0 մետրը, իսկ տարբեր բարձրությունների ճարտարապետական տարրերի վրա տեղադրվելու պարագայում՝ 10.0 մետրը:

130. Չի թույլատրվում գովազդ, գովազդի միջոց տեղադրել թեք տանիքի և ծածկի, ոչ հիմնական, ոչ ստացիոնար, շենքի, շինության, կառույցի, ավտոտնակի, կրպակի, կրպակաշարի, կցակառույց օբյեկտի տանիքի վրա:

131. Չի թույլատրվում գովազդ, գովազդի միջոց տեղադրել մինչև 4 հարկանի շենքի, շինության, կառույցի տանիքի կամ ծածկի վրա:

132. Շենքի, շինության, կառույցի տանիքների վրա գովազդի, գովազդի միջոցի առավելագույն բարձրությունը կարգավորվում է ըստ հարկայնության և պետք է լինի.

1) 4 հարկանի շենքի, շինության, կառույցի համար ոչ ավելի, քան 2.0 մետր,

2) 5-9 հարկանի շենքի, շինության համար ոչ ավելի, քան 3.0 մետր,

3) 10-14 հարկանի շենքի, շինության համար ոչ ավելի, քան 4.0 մետր,

4) 15 կամ ավելի հարկ ունեցող օբյեկտների համար՝ ոչ ավելի, քան 5.0 մետր:

133. Սույն որոշման իմաստով շենքի, շինության, կառույցի մեկ հարկի բարձրությունը 3.0 մետր է: Կոտորակային արժեքների դեպքում շենքի ընդհանուր բարձրության ամբողջ թվային արժեքի կլորացումը կատարվում է մաթեմատիկական կլորացման կանոններին համապատասխան, և 1, 2, 3, 4 թվերը փոխարինվում են զրոյով, իսկ 5, 6, 7, 8, 9 թվերը մեկով ավելացնում են դիմացի թիվը:

134. Եթե շենքի, շինության, կառույցի տանիքին տեղաբաշխվող (տեղադրվող) գովազդը, գովազդի միջոցը պարունակում է ապրանքային նշանի պատկեր, ապա վերջինիս որոշակի տարրեր կարող են գերազանցել սույն կանոններով սահմանված չափորոշիչները, բայց ոչ ավելի, քան գովազդի միջոցի ամբողջական մակերեսի 1/5-րդը:

135. Ավտոմեքենաների՝ վառելիքի կամ էլեկտրական լցակայանների զբաղեցրած հողատարածքում թույլատրվում է վահանակի տեսքով տեղադրել միայն մեկ գովազդ, գովազդի միջոց, ներառյալ գնի ցուցատախտակը, և մեկ գովազդ, գովազդի միջոց կամ ցուցատախտակ լցակայանի զբաղեցրած տարածքից դուրս, նույն մայթին: Այս կոնստրուկցիաների առավելագույն բարձրությունը չպետք է գերազանցի 8.0 մետրը (հաշվարկված գետնի մակերևույթից), լայնությունը՝ 3.0 մետրը, խորությունը՝ 0.80 մետրը:

136. Վառելիքի կամ էլեկտրական ավտոլցակայանների զբաղեցրած հողատարածքներում գովազդ, գովազդի միջոց, բացի առանձին վահանակից և ֆրիզի եզրերից պահպանելով 0.30 մետր հեռավորություն:

137. Ավտոմեքենաների՝ վառելիքի կամ էլեկտրական լցակայանների սահմաններից դուրս ցուցատախտակները տեղադրվում են երթևեկությանը համընթաց ուղղությամբ՝ լցակայանի զբաղեցրած հողատարածքի սահմաններից 30.0 մետրից ոչ ավելի հեռավորության վրա՝ պահպանելով 3.0 մետրից ոչ պակաս մայթի լայնություն:

138. Վառելիքի կամ էլեկտրական լցակայանների գովազդի, գովազդի միջոցի կամ գնի ցուցատախտակների էլեկտրոնային կրիչների (էկրանների) վրա գովազդի ցուցադրումը պետք է իրականացվի միայն ստատիկ պատկերների կիրառմամբ: Պատկերի փոփոխությունը պետք է կատարվի 30 վայրկյանի ընթացքում մեկ անգամից ոչ ավելի: Պատկերի փոփոխության արագությունը չպետք է պակաս լինի 2 վայրկյանից:

139. Դրոշակաձողը գետնի վրա առանձին տեղակայված միջոց է, որը բաղկացած է հիմքից և մետաղական հենքից, որի վրա բարձրանում է դրոշը:

140. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից կարող են սահմանվել դրոշակաձողի բարձրությանը ներկայացվող անհատական պահանջներ՝ հաշվի առնելով տվյալ տարածքի ճարտարապետական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր դեպքում դրոշակաձողի առավելագույն բարձրությունը չպետք է գերազանցի 9.0 մետրը:

141. Միևնույն կողմում տեղակայվող մեկից ավելի դրոշակաձողերը պետք է տեղադրվեն միմյանց զուգահեռ, իսկ տեղեկատվական դաշտերը պետք է լինեն մեկ ուղղությամբ:

142. Դրոշակաձողը կարող է տեղադրվել փողոցներում, պողոտաներում, մայրուղիներում, խաչմերուկներում, հրապարակներում:

143. Դրոշի տեղեկատու թույլատրելի մակերեսի չափերը և համամասնությունները որոշվում են կախված դրոշակաձողի բարձրությունից և տեղանքից՝ Ծաղկաձորի համայնքապետարանի

աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի հետ համաձայնեցմամբ:

144. Մեկ դրոշակաձողի վրա չի կարող տեղադրվել մեկից ավելի գովազդ:

145. Դրոշի վրա թույլատրելի է պատկերել գովազդատուի ապրանքային նշանը և անվանումը, իսկ տեղեկատվական դաշտը և նշանի դեկորատիվ ու գեղարվեստական տարրերը պետք է տեղադրվեն մեկ հորիզոնական առանցքի վրա:

146. Դրոշակաձողերի հիմքերի միջև, բացառությամբ համակառույց դրոշակաձողերի, նվազագույն հեռավորությունը չի կարող լինել 200.0 մետրից պակաս շառավիղով, իսկ համակառույց դրոշակաձողերի հեռավորությունը այլ դրոշակաձողից կամ համակառույց դրոշակաձողերից հաշվարկվում է վերջին (ծայրի) դրոշակաձողի հիմքից՝ դիտարկվելով տվյալ կողմի երթևեկության ուղղության տեսանկյունից:

147. Համակառույց դրոշակաձողերը պետք է ունենան միասնական ոճային լուծում, իսկ հիմքերն ու հենքերը լինեն միագույն:

148. Համակառույց դրոշակաձողերի առավելագույն քանակը չի կարող լինել 4-ից ավելի:

149. Համակառույց դրոշակաձողերի հիմքերի միջև հեռավորությունը չի կարող լինել 0.5 մետրից ավելի:

150. Շտենդերը տնտեսվարող սուբյեկտների կողմից աշխատանքային ժամերի ընթացքում տեղադրվող միակողմանի կամ երկկողմանի արտաքին գովազդի շարժական և ժամանակավոր տեղադրվող գովազդի միջոց է:

151. Շտենդերը կարող է տեղադրվել նվազագույնը 3.50 մետր լայնք ունեցող մայթերին և չի կարող զբաղեցնել 1քմ-ից ավելի տարածք:

152. Շտենդերի տեղադրման համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները՝

1) շտենդերի կոնստրուկցիայի չափերը կարող են ունենալ առավելագունը 0.70 մետր լայնություն և 1.20 մետր բարձրություն:

2) շտենդերի հիմնակմախքը պետք է պատրաստված լինի փայտե նյութերից:

3) շտենդերը չի կարող տեղադրված լինել այն տեղակայած տնտեսվարող սուբյեկտի ոչ աշխատանքային ժամերին:

4) շտենդերի հիմնակմախքի ամենահեռու եզրը կարող է տեղադրվել տնտեսվարող սուբյեկտի տարածքից առավելագույնը 1.0 մետր հեռավորության վրա:

5) շտենդերի տեղեկատու մակերեսը պետք է ունենա միատարր մուգ գույնի ֆոն՝ նախատեսված բացառապես կավիճով գրառումներ անելու համար:

153. Մշակութային հաստատություններին կից տեղադրվող միջոցառումների ազդագրերի տեղադիրները յուրաքանչյուր դեպքում պետք է համաձայնեցվեն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության հետ:

154. Վահանակի (ներառյալ սքրոլլեր, պրիզմատրոն) և բարձակի վրա տեղադրվող գովազդի մակերեսը հաշվարկվում է յուրաքանչյուր կողմի տեղեկատու դաշտի մակերեսով:

155. Էկրանային (վերարտադրող) սարքավորումների մակերեսը որոշվում է վերարտադրվող պատկերի տեղեկատու դաշտի մակերեսով:

156. Ցուցափեղկում կամ ցուցափեղկի վրա տեղադրված (տեղակայված) արտաքին գովազդի, գովազդի միջոցի մակերեսը հաշվարկվում է փաստացի տեղադրված գովազդի ընդհանուր կոմպոզիցիոն չափով:

157. Ցուցափեղկի ապակու հատվածի ներքին կողմից կամ առանձնացված ապակեպատ պահարանի միջոցով կոմպոզիցիոն լուծումներ ունեցող գովազդի մակերեսը հաշվարկվում է ցուցափեղկի ընդհանուր արտաքին մակերեսով:

158. Վերանորոգման կամ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ շինարարական աշխատանքների ծածկման նպատակով, յուրաքանչյուր ցուցափեղկի վրա փակցված գովազդային տեղեկատու մակերեսի համար տեղական տուրք չի գանձվում, եթե այն չի գերազանցում 0.40 մետր բարձրությունը և 0.60 մետր երկարությունը և չի

պարունակում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվածից ավելի տեղեկություն:

159. Նկուղի կամ կիսանկուղի աստիճանավանդակին կից հենապատի վրա տեղադրված բազրիքին ներկառուցված գովազդի միջոցի մակերեսը հաշվարկվում է գովազդի տեղեկատու դաշտի մակերեսով:

160. Նկուղի կամ կիսանկուղի աստիճանավանդակին կից հենապատի վրա տեղադրված լուսամփոփի վրա գովազդի տեղեկատու մակերեսը հաշվարկվում է գովազդի միջոցի տեղեկատու դաշտի մակերեսով:

161. Հովարների, ծածկերի և հովանոցների վրա տեղադրվող գովազդի տեղեկատու մակերեսը որոշվում է դրանց ֆրիզային հատվածի ամբողջական մակերսով, որի վրա տեղադրված է գովազդը:

162. Դրոշակների տեղեկատու մակերեսները որոշվում են բոլոր կողմերի մակերեսով:

163. Շտենդերի վրա տեղադրվող գովազդի մակերեսը հաշվարկվում է կողմերի ընդհանուր մակերեսով՝ ներառյալ կոնստրուկցիոն մասը:

164. Տրանսպորտային միջոցի վրա տեղադրված գովազդի, գովազդի միջոցի մակերեսը հաշվարկվում է փաստացի տեղադրված գովազդի բոլոր երեսների ընդհանուր կոմպոզիցիոն չափով՝ ներառյալ հավելյալ կոնստրուկցիոն մասը:

165. Վառելիքի կամ էլեկտրական ավտոլցակայանների վահանակների՝ գովազդի տեղեկատու մակերեսը հաշվարկվում է փաստացի տեղադրված գովազդի միջոցի բոլոր երեսների ընդհանուր կոմպոզիցիոն չափով:

166. Հեռախոսախցիկների, բանկոմատների, վճարային տերմինալների, առևտրի ավտոմատ սարքավորումների (վենդինգային սարքավորուներ), սառնարանների, գովազդի տեղեկատու մակերեսի չափերը որոշվում են գովազդի տեսանելի կողմերի ամբողջական մակերեսների հանրագումարով:

167. Կանգառասրահների վրա տեղադրված գովազդի, գովազդի միջոցի տեղեկատու մակերեսի չափերը որոշվում են յուրաքանչյուր կողմի տեղեկատու դաշտի մակերեսով:

168. «Սպառողների իրավունքի պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխանող ցուցանակների համար տեղական տուրք չի գանձվում:

169. Պետական մշակութային հաստատությունների միջոցառումների ազդագրերի համար տեղական տուրք չի գանձվում:

170. Սույն կանոններով չնախատեսված, առանձին տեղակայված, եռաչափ կամ կոմպոզիցիոն (կոմպոզիցիաների տեսքով) կոնստրուկցիաներով գովազդի տեղեկատու մակերեսի չափերը որոշվում են յուրաքանչյուր դեպքում անհատապես՝ Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի հետ համաձայնեցված նախագծի հիման վրա:»:

171. Սույն կանոնները կիրառելի են արտաքին գովազդի և գովազդի միջոցների նկատմամբ ինչպես դրանց տեղաբաշխման, այնպես էլ տեղաբաշխումից հետո՝ շահագործման փուլում:

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **12/09/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լսեցին *«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՅԸ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, Որոշեցին՝ << Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին>> ավագանու որոշման նախագիծը հանել ավանագու 12.09.2024թ. նիստի օրակարգից՝ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից փորձաքննության եզրակացության ուշացման պատճառով:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 119

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Էդգար Խանզադյանի դիմումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, քաղաք Ծաղկաձոր Մագիստրոսի փողոց 13/3 հասցեում գտնվող բնակավայրերի, ընդհանուր օգտագործման 0, 0006 հա մակերեսով հողամասի, «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի նոյեմբերի 09-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը երկարացնել 5 տարի ժամկետով , մինչև 2031թվականի նոյեմբերի 09-ը, տարեկան վարձաչափը թողնել նույնը՝ 100 000 / մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 120

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 06-Ի N 3/1 ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 09-Ի N 29 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 06-ի « Ծաղկաձորի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի նախագծի հաստատման մասին» N 3/1 որոշումը:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 09-ի « Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N29 որոշումը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 121-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ) հոդված «4222» (Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) «1000.0» թիվը փոխարինել «2000.0» թվով:
2) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ) հոդված «4239» (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) «1000.0» թիվը փոխարինել «2000.0» թվով:
3) Բաժին 4 խումբ 2 դաս 4 (Ոռոգում) հոդված «4213» (Կոմունալ ծառայություններ) «0.0» թիվը փոխարինել «1720.0» թվով:
4) Բաժին 4 խումբ 2 դաս 4 (Ոռոգում) հոդված «4823» (Պարտադիր վճարներ) «0.0» թիվը փոխարինել «139.0» թվով:
5) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «117674.2» թիվը փոխարինել «127058.7» թվով:
6) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված «4239» (Ընդհանուր

բնույթի այլ ծառայություններ) «0.0» թիվը փոխարինել «700.0» թվով:
7) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված «4241» (Մասնագիտական ծառայություններ) «0.0» թիվը փոխարինել «700.0» թվով:
8) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված «4823» (Պարտադիր վճարներ) «110.0» թիվը փոխարինել «400.0» թվով
9) Բաժին 9 խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «20358,0» թիվը փոխարինել «25054,0» թվով:
10) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «189457.8» թիվը փոխարինել «169828.3» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N39 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 16-ի « Մեղրաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին» N 39 որոշումը:

Կողմ -2	Դեմ -6	Ձեռնպահ -2
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ	ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ	ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ	ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ	ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ	
	ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ	
	ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ	
	ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 123

ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի և հիմք ընդունելով 2024 թվականի հուլիսի 22-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ նախնական համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր , Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «Ալվինա հյուրանոցային համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 1,78164հա մակերեսով (ծածկագիր՝ 07-005-0026-0944) բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված ՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասում բնակելի համալիրի կառուցման համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 124

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 130 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Ծաղկաձոր համայնքի « Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հասիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N 130 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված 2
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի
դեկտեմբերի 01-ի թիվ 130 որոշման
Փոփոխությունները՝ Ծաղկաձոր համայնքի ավագանու
2024 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 124 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝
19

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	8	9	10
1	Կամերային դպրոց "ՀՈՒԿ"	Տնօրեն		-	1	180,000				180,000
2		գեղարվեստական մասի ղեկավար			1	125. 000				125. 000
3		Գլխավոր հաշվապահ			1	140,000				140,000
4		գրադարանվար			1	175,000				175,000
5		տնտեսական առարկաների ուսուցիչ			2	125 000				250 000
6		Դաշնամուրի ուսուցիչ			2	125,000				250,000

7	"Ծաղկաձորի մանկա	Կերպարվեստի ուսուցիչ			1	125,000				125,000
8		Կիթառի ուսուցիչ			1	125,000				125,000
9		Թատերականի ուսուցիչ			1	125,000				125,000
10		Պարի խմբավար			1	125,000				125,000
11		Մոդելավորման, ռիգայանի ուսուցիչ			1	125,000				125,000
12		Վոկալի ուսուցիչ			2	125,000				250,000
13		Շվի-դուդուկի ուսուցիչ			1	125,000				125,000
14		դհոլի ուսուցիչ			1	125 000				125. 000
15		Հավաքարար			1	120,000				120,000
16		Տնտեսվար			0.5	125,000				62,500
		ԸՆԴԱՄԵՆԸ			18,5					1 927 500

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2024 թվականի թիվ 125

ՇՎԵՑԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՆԵՎ ՔԱՂԱՔԻ ՏՂՈՒԱՆԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՎԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Շվեցարիայի Հանրապետության Ժնև քաղաքի Տրոինեքս համայնքի 2024 թվականի օգոստոսի 29-ի GED doc N 24232 պաշտոնական հրավերը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն՝ Շվեցարիայի Հանրապետության ժնև քաղաքի Տղուանե համայնքի կողմից հրավերը ընդունելու Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, պաշտոնական այցի շրջանակներում, 2024 թվականի հոկտեմբերի 03-ից 08-ն ընկած ժամանակահատվածում՝ կողմերի փոխհամագործակցության կապը զարգացելու, փոխճանաչելիության ամրապնդման և ինտեգրման գործընթացները ապահովող մեխանիզմները բարելավելու և հուշագիր ստորագրելու նպատակով,
.2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**